

Հ. Յ. Գ.
ՄԱՍԼՈՅ ԴԻՐԱՆ

ԴՐՈՇԱԿ

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՁՆԱԿՅՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

1903

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révol. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse: 43, rue de la République
REDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԿԱՆ ԴԱՁՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1902-1903

Տարին սահեց հայրենիքի վրայից, առանց շոշափելի մի հեռք թողնելու: Հայի վիճակը ընդհանուր առմամբ մնաց անփոփոխ, ոչ աւելի ծանր, ոչ աւելի թեթեւ, — մէկն էր ս ո վ ո ր ա կ ա ն, «նօրմալ» տարիներից:

Հայրածանքները դադար չառան: Եւրոպայի դժոխային մթնոլորտում ենթակայ մշտնջենական ահ ու սարսափի, իր սեփական ստեղծից անգամ զարդանդող Մ ա ն ի ա կ ը փշեր ու ցերեկ աշխատանքի վրայ էր. նա մի վայրկեան անգամ չէր մոռանում հայ ժողովուրդին և շարունակ խորհում էր միջոցներ, մշակում էր հոյակապ ծրագիրներ՝ այդ ժողովուրդը իսպառ «խաղաղացնելու»... Թալանի և սպանութեան միևնոյն քաղաքականութիւնը կապարի նման ծանրացած էր Մեծ ու Փոքր Հայաստանի վրայ: Արտասահմանեան հայ և օտար թերթերի մէջ հրատարակած թղթակցութիւնները ի ցոյց են բերում այդ քաղաքականութեան արհաւիրքները, որի էական ձգտումն էր՝ ոչնչացնել նախ ը մ բ ո ս տ տարրը հայի հայրենիքում և ապա առհասարակ ջնջել հայութիւնը:

«նօրմալ» վիճակը մի վայրկեան սպառնաց փոթորիկ ծնել... Ընթերցողը յիշում է Սասունի և ամբողջ Տարօնի տագնապը և յեղափոխական կազմակերպութեան ահապահները վերահաս աղետների դիմաց: Մշոյ դաշտը լլուծել էր քրդերով ու չէրքէզներով. մի քանի աշիրէթներ կանոնաւոր պօրթի հետ պաշարել էին Սասունը... Բանի կրորդ անգամն էր արդէն... Բայց այս անգամայ փորձը թւում էր եղբրական. բոլոր պատրաստութիւնները խնամքով տեսնւած էին կառավարութեան կողմից. ոչ մի կասկած չկար, որ դահիճը յղացել էր ջարդի մեծ ծրագիր և Տարօնի առիւծները, որոնք այնքան յաճախ դիմադրել էին թշնամու գրոհին, կանգնած էին թերևս անխուսափելի և վերջնական կորստեան առջև... Բոպէն կրիտիքական էր: Երկրի ընկերներից հրահանգւած՝ Արևմտեան Բիւրօն ձեռնարկեց մի շարք դիմումներ՝ հարւածը կանխելու համար: Փրանսիացի մեր բարեկամները, ինչպէս միշտ, այս անգամ ևս սիրով արձագանք տւին և գիտակցելով վտանգի ծանրութիւնը՝ շտապեցին միևնաբար մօտ, որը չը զլացաւ իր ուշադրութիւնը և պէտք եղած դիմումները: Շատ չ'անցաւ և ծանուցեց

Փրանսիական գործակալի ճանապարհուրդ դէպի Մուշ-Սասունի շրջանը, ուսկից նա պիտի տեղեկագրեր իր կառավարութեանը կատարուող խժգժութիւնների մասին: Փրանսիայի օրինակին հետևեցին Անգլիան և Ռուսաստանը: Մինիստր Դելկասէ որոշեց, բացի այդ, հաստատել Վանի մէջ Փրանսիական մնայուն փոխ-հիւպատոսութիւն: Մեր վեհանձն բարեկամներին ենք պարտ, ապա անշուշտ, նաև Դելկասէի նախաձեռնութեան, որ ջարդի կոշտարը գէթ առժամայէս անհետացաւ Սասնոյ հորիզոնից:

Միևնաբար մի ուրիշ փաստ է՝ անցեալ տարւայ յուլիսին գումարւած Բ ր ի ւ ս է ի հ ա մ ա թ ո ղ ո վ ը, որը մի փորձ էր՝ ամբողջացնելու հայասէր պրօպագանդը արևմտեան Եւրոպայում: Դա միաժամանակ ա ու ա ջ ի ն միջազգային կոնգրէան էր, ուր այլևայլ աղգերի ներկայացուցիչներ — թուով մօտ 150 — խորհրդակցում էին մի ճնշւած ժողովուրդի դրութեան և նրան դարմանելու միջոցների մասին:

Հայասէր շարժումը տարածւում է զգալի կերպով, հայի և Հայաստանի մասին լսուած են այսօր հեղինակաւոր ձայներ, կազմւում են հրապարակային ատենախօսութիւններ նոյնիսկ այնպիսի վայրերում, ուր մինչև օրս բնաւ չեն հետաքրքրւել այդ կարգի խնդիրներով: Մեր բոլոր սկեպտիկութեամբ հանդերձ դէպի «դրսի պրօպագանդի» զօրաւորութիւնը՝ պիտի խոստովանենք սակայն, որ այդ պրօպագանդը որոշ չափով հասնում է իր նպատակին: Եթէ նա անզօր է շատ թէ քիչ արմատական լուծում տալու մեր խնդրին, գէթ աջողում է սանձել Գաղանի բնազդումները, գէթ կարողանում է կանխել նորանոր արիւնհեղութիւնները: Նախորդ տարւայ տագնապը և համեմատաբար բարեբաստիկ վախճանը մի նոր ապացոյց է այդ իրողութեան:

Միևնաբար մի երրորդ փաստ ունենք յիշատակելու տարւայ անցքերի այս համառօտ հաշուէկշուի մէջ — դա յեղափոխական տրամադրութեան աճումն է հայրենիքում և արտասահմանում: Այդտեղ է մեր յոյսը, և մեր խրախոյսը: Չենք վարանում կրկնել — թէկուզ լինի դա հազարուակերպորդ անգամը — որ այդ փաստի մէջն է մեր յաղթանակի միակ գրաւականը: Մի վայրկեան անգամ չպէտք է մոռանանք, որ հայրենիքը, նոյնիսկ «ամենախաղաղ» և «ամենանօրմալ» պայմանների մէջ մի իրական դժոխք է, ուր Սադայէլը հայկական թարմ արեան միշտ ծարաւի՝ անխոնջ գաւեր է նիւթում իր

վերաւոր, բայց անպարտելի զո՛հի դէմ, ուր ազատ ու համարձակ վիտտում են մարդանման բորենիները, ուր միջօնաւոր ժողովուրդը կոտորուում է հարկահաւաքներից և հարկւրաւոր ուրիշ տղերակներից, կոտորուում է սովից ու ցրտից, կոտորուում է, սպառուում է...

Լաւ գիտակցենք այդ, հայեր, ժամանակն է, գերագոյն ժամանակը: Եւ չ'օրօրենք մեզ սին ու պատիր յոյսերով, ղիտաղալ պրօպագանդիս, ղկուլտուրական պայքարի՝ ցնորական ակնկալութիւններով: Պատրաստենք այդ կոտորուող ժողովուրդին, տանք նրան միջոց ինքնապաշտպանութեան, հոգանք, որ նա զինւի ու կազմակերպուի, որ կարողանայ պատուով դիմաւորել գալոց անխուսափելի փոթորիկներին:

Ապա թէ ոչ... մենք դեռ շատ անգամ ականատես կը լինենք — ան հայկական ստրկամտութիւն — ցաւով ու սարսուռով ականատես կը լինենք, թէ ինչպէս հագարաւոր հայաստանցիներ կ'ընկնեն ամենամոտապառն, ամօթալի մահով, առանց դիմադրելու, առանց դիմադրութեան միջոց ունենալու:

— Ինչո՞ւ հայերը իրենք էլ չեն սպանում, կամ գէթ չեն դիմադրում, — հարցնում է աւստրիացի հրապարակախօսը, հարցնում է ունգարացի պատգամաւորը:

— Ձեռն դիմադրում, որովհետեւ զէնք չունեն:

— Բայց ձեր հարուստները ի՞նչ են մտածում, ինչո՞ւ չեն զինուում:

Ահա բնական, տրամաբանական հարց, որ սակայն անտեղի կը թւայ մեր ժողովուրդի ճակատագիրը վարել յաւակնող մի կարգ անուղեղ որոճողներին:

Այո՛, եւրօպացի ճիշդ է նկատում, մենք կըստատենք անխուսափելի կոտորածների, որպէս զի կատարենք մեր ազգային գերագոյն պարտքը, մի քանի բրօշ բաժին հանելով նորւոր որբացած ընտանիքներին...

Այդ է մեր դառն, եղկելի իրականութիւնը: Այդ է մեր յաւիտենական գանգատի նիւթը: Այդ է մեր խորունկ կսկծեցողիչ վէրքը...

Մի ողջալի երկուութիւն, մի դաժան, այլանդակ կօնտրաստ շարունակում է իշխել հայկական իրականութեան վրայ: Մի կողմից յեղափոխական փոքրամասնութիւնն է, քանակով այնքան քիչ, որակով այնքան շատ, որ հայրենիքի մութ ու անհիւրընկալ խորշերում թաքնւած, հպարտ իր կոչումով, գիտակ իր սրբազնագոյն պարտքի, մի ջնաշխարհիկ անձնուրացութեամբ կրում է անօրինակ զոհանքներ, մղում է ղստորերկրեայ՝ պրօպագանդ, խրախուսում է լքած ժողովուրդին, և միեւնոյն ժամանակ միշտ սուրբ ձեռն, միշտ ճակատը բաց՝ պատրաստ է դիմաւորել արեան ու աւարի ծարաւ քրդական վոհմակներին...

Միւս կողմից...

Միւս կողմից՝ հայ մեծամասնութիւնը և ամէնից առաջ պերճանքի ու նիւթական վայելքների մէջ լողացող հայոց բուրժուազիան, գձուձ, ար-

ծաթասէր, որ կարծէք երդւել է միանգամ ընդմիշտ քար ու ապաւաժ մնալ մորթուողների աղեկաուր հաւաքի դիմաց... Կծնարասար ցայտուն է, իրողութիւնը գառն, յուսահատեցնելու չափ տիուր...

Մենք անգրգելի ենք մեր ուղղութեան մէջ և խոչընդոտները չպիտի դիմանան մեր առջև: Արքան մենք ընդունակ ենք սիրոյ, նոյնքան ընդունակ ենք և սատելութեան: Արքան մենք խանդափն սիրում ենք մեր ժողովուրդին, նոյնքան և ստում ենք նրա վեհ ու արիւնոտ դատի հակառակորդներին: Մենք պիտի շարունակենք տանտակ տարի առաջ սկսած պայքարը և համերաշխութեան անդադրում հրաւեր կարգաւով բողբոյ յեղափոխական տարրերին — ինչ դրօշակի էլ պատկանեն նրանք — մենք պիտի ջանանք ստաւարացնել կուլտուրի բանակը, պիտի ջանանք մաքրել կուլտուրայի ճանապարհը այլևայլ ցեցերից, մենք պիտի հալածենք մեր թունաւոր ստելութեամբ հայ համրականներին, բոլոր նրանց, որոնք գիտակցաբար կամ անգիտակցաբար ստտար են լինում թշնամու դաւերին, բոլոր նրանց, որոնք յանցաւոր թեթեւամտութեամբ արհամարհում են յեղափոխականի յուսահատ կողմ: զէնք, զէնք այն ժողովուրդին, որ ղգեգերում է մասսային կոտորածի մղձաւանջի տակ:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ի

Ն Ա Մ Ա Կ Կ. Պ Օ Լ Ս Է Ն

13 դետեմբեր 1902

Այս տարւան փետրուարի վերջերն էր որ ձեզի հաղորդած էի ճիզգէյի ոչ-խլամ՝ հասարակութեանց պիտերուն կողմէ կայսերական պալատան, մեծ եպարքոսին, ներքին գործոց նախարարութեան և պատրիարքարաններու ու խախամարանի տարբեր թեւականներով տրած երեք հեռագիրներէն երկուքին հարազատ թարգմանութիւնը: Այն թեւականէն իվեր ամիսներ անցած էր, այս խնդիրն ալ մոռացութեան մատնւած կ'երևէր՝ այն բարի սովորութեան համեմատ, որ մի տարւան ընթացքին մէջ այդպիսի հազարաւոր բողբոնք, հանրագրութիւններ վոսփորի վճիտ ջուրերը կ'իյնան, եթէ երբէ մինչև Պօլիս հասնելու բախան ունենան անոնք — երբ օրին մէկը արտասահմանեան թերթերու մէջ կարդացի, ոչ նւազ պարմացումով, թէ ճիզգէյի Մըթաֆա փաշային վրայ զինուորական ուժեր փոխադրած ըլլալով՝ փաշային տունտեղը քարուքանդ ըրած և զինքն ալ սպաննած ըլլայ: Ձեմ՝ կրցած ընդունիլ այս լուրին ստուգութիւնը, քանի որ Մըթաֆա փաշային կոնակը կը տեսնէի — ինչպէս որ ճիզգէյիք ալ հեռագրած էին — տխրահոգ և միշտ Զէքի փաշան, չորրորդ պօրաբանակի ընդհանուր հրամանատարը, որուն ձեռքին և բացարձակ լիազօրութեանը յանձնւած է տարիներէ իվեր ամբողջ Հայաստանին և Միջագետքի մեծ մասին դժբախտ ճակատագիրները: Ուստի հետամուտ եղայ խնդրին էութիւնը հասկնալու, և այսօր իվիճակի եմ բուն իրողութիւնը յայտնել ձեզի, հիմնելով ամենաստոյգ տեղեկութիւններու վրայ, զորքազած եմ վաւերական աղբիւրէ մը: Ահա կըլլու թիւնը:

Կարելի չէ եղած որոշ գիտնալ թէ ճիշդեցոց քաշած հեռագիրներուն, թէ այդ հեռագիրներուն հրատարակելուն և թէ ճիշդեցոց կերպով մը Պօլիս ղրկելու յաջողած հանրագրութեան և կամ հրատարակուցած կուսակալ խախտ պէկին Պօլիս գալուն Գրան կամ պալատին անոր տւած բերանացի աննպաստ տեղեկութիւններուն հետեանօք Պօլսոյ ձեռնհաս պաշտօնարանը, ըսինք պալատան մէջ կ'որոշեն Մըսթաֆա փաշայի մասին եղած բողոքները քննել և այդ քննութիւնը կատարելու պաշտօնով ասկից ճամբայ կը հանեն երկու զինւորական բարձրաստիճան պաշտօնեաներ, հրահանգ տալով նոյնպէս չորրորդ բանակի հրամանատարութեան որ երկու զինւորականներ ղրկէ, որոնք միանալով Պօլսէն ղրկւածներուն, կազմեն զինւորական ատեան մը: Ասկից և Երզնկայէն ճամբայ ելած ֆէրիզներ կը հասնին Տիգրանակերտ ու ատեանը կազմուած կը հռչակուի: Բայց ինչպիսի ամենադժար կէտը կը կայանայ Մըսթաֆա փաշան իր որջէն հանելով այս ժողովին առջևը ներկայացնելու մէջ՝ եթէ ոչ պոյն քննելու ու դատապարտելու գէթ գործին ձեակերպական երևոյթը ազատելու համար: Այդ մասին ալ կը դիմեն տաճկական խորամանկութեան և համոզելով կը բերեն զինք Տիգրանակերտ ու կրակոսին քննութիւն: Քննութեան շարունակած օրերու մէջ փաշան կը հիւրասիրւի մասնաւոր տան մը մէջ, բայց ատիկայ ալ շարժանք կուգայ անզուսպ փաշային և կ'ուզէ, առանց քննութեան հետեանքին սպասելու, անմիջապէս հեռանար Հարկ կ'ըլլայ քննութիւնը կարճի կապել և մէկ շաբթուան մէջ անիկայ կը հասնի իր պատուաւոր վախճանին: Զինւորական անաչառ () ատեանը իր խորախորհուրդ նկատուածներով անհիմն և անարժէք կը հռչակէ փաշայի մասին տեղացող բողոքները և անպարտութեան վճիռը կ'արտասանէ ու փաշան առօք փառօք կը վերադարձնէ ճիշդէ:

Փաշային ճիշդէ հասնելէն մինչև շանսատակ եղած օրը, այս ժամանակամիջոցին մէջ իր կատարած գաղտնութիւններու վրայ հոս չպիտի ծանրանամ, միայն ուրախութեամբ պիտի արձանագրիմ՝ այն իրողութիւնը, որ անպատուելու փորձուած հայ նորապսակ կուսի մը պատուը պատճառ դարձած է գաղանին մահուան՝ հետաքրքրական հետեակ պարագաներու մէջ: Ճիշդէյի հարուստ հայ երիտասարդ մը կ'ամուսնանայ: Փաշան պսակին կատարուած օրն իսկ լուր կը ղրկէ տղուն հօրը որ որոշած է նոր հարսին առաջին առագաստին վայելուժը իրեն սեփականացնել՝ հետեաբար այն գիշեր իսկ հարսը ղրկէ իր մօտ: Տղան փաշային լքիրը նպատակը իմանալուն, կ'առնէ իր ամուսինը ու կը փախչի ճիշդէյէ 4 ժամ հեռաւորութեամբ գիւղ մը, ուր գիւղացիք կը պահեն զինք: Փաշան տղուն իր նորապսակ ամուսինին հետ փախուստը երբ կ'իմանայ կը բորբոքի և շորս կողմ մարդիկներ կը ղրկէ: Գիւղացիք իրենց կողմէ նորապսակ ամուսիններուն տրուած ասպնջականութեան երևան գալով փաշային վեճեմանութեան ենթարկելէ վախնալով գաղտնապէս կը փախցնեն զիրենք Սիւլէյման փաշայի սահմաններէն ներս, ուր Սիւլէյման փաշայի տղան իր պաշտպանութեանը տակը կ'առնէ զիրենք: Սիւլէյման փաշայի տղան իմանալով ասոնց փախստեան պատճառները և Մըսթաֆա փաշային պիղծ դիտաւորութիւնը, կրակ կը կորի և միւս կողմէ մտածելով թէ այս դժբախտներուն իր տւած պաշտպանութիւնը կրնայ առիթ

տալ Մըսթային իրեն դէմ անուցած ատելութեան վերաբարձարձման և թերևս անոր կողմէ պատրաստուած մէկ յարձակումի, ատոր տեղի և ժամանակ չտալու համար, անմիջապէս կը ժողվէ իր մարդիկը և յանկարծակի յարձակում մը կատարելու դիտաւորութեամբ ճամբայ կ'իյնայ դէպի ճիշդէ: Ճիշդէէն ներս մտած պահուն Մըսթաֆա փաշան կը նստի եղբր ամբողջովին ժողովրդի կողոպուտներով ու լաց ու կոծով շինել տւած իր հոյակապ նորաշէն պալատան պատշգամբի վրա: Աղա Սիւլէյմանի քաջ տղան երբ կը տեսնէ գայն, առանց ժամանակ կորսնել տալու հրացանը կ'ուղղէ անոր դէմ և 4-5 լաւ նշան առնուած գնդակներու հարուածին տակ մեծափոր փաշան կը փուէ պատշգամբի տախտակամածին վրայ: Առիւը կը շարունակուի երկու աշիթներու միջև և կը վերջանայ աղա Սիւլէյմանի մարդիկներուն փառաւոր յաղթութեամբ, որոնք անդարմանելի կորուստներ կուտան Մըսթաֆա փաշայի և իր արբանեակներուն, մահ սփռելով չորս կողմ, քար ու քանդ ընելով անոնց բոյնը և ճոխ աւարով մը կը վերադառնան իրենց տեղերը: Այս փառաւոր յաղթութեան տխուր դրուագ մը կը կազմէ Սիւլէյման փաշայի տղուն սպաննուիլը, որ իր հօրը մահէն իվիր իր աշիթներին պետը եղած էր: Անպատուութենէ ազատուած հայ կոյսի մը հետ ամբողջ հայութիւնը յարգանք պիտի յիշէ անվհեւ հերոսին յիշատակը: Ճիշդէյի պիտի օրհնեն միշտ յիշատակը այն քաջին, որու շնորհիւ իրենք ազատ շունչ մը կը քաշեն այսօր իրենց հայրենի հողին վրայ:

Ն Ա Մ Ա Կ Է Ր Զ Ր Ո Ւ Մ Է Ն

25 հոկտեմբեր 1902

Էրզրուտից դէպի հարաւարելէք ընկնում է Խնուսի գայմագաւուութիւնը, որ հին պատմական Խնուս գաւառն է. համանուն աւանով: Աւնի 24 հայկական գիւղեր, որոնց մէջ կոտորածից յետոյ բուն են դրել զանազան քիւրդ աղաներ իրենց մշակների և ծառաների հետ: Բացի կառավարութեան տւած անթիւ հարկերից ու նրա պաշտօնեաների ձեռքերից քաշած տանջանքներից, հայ ժողովուրդը եռապատիկ տանջանքներ է կրում՝ քիւրդ աղաներից: Նրանք մի-մի անսահման տէրեր են, որոնց իւրաքանչիւր քմահաճոյքին պիտի ենթարկուի գիւղացին: Իւրաքանչիւր գիւղ ունի մի աղա, որի բոլոր տնտեսական կարիքները ինքը պիտի հոգայ: Ժողովուրդը իր արտերի մի որոշ մասը ցանուժ, հնձում, կախում է աղայի համար, պահում է նրա տաւարը, կովը, ձին, ոչխարը և սատկածի փոխարէն պարտաւոր է ինքը վճարել: Այն գիւղեր էլ, ինչ պիտիք են Խաբատին, Մարութ, Ղարաքէօփորու, Եղզթըլը պիտիք են Խաբատին, Մարութ, Ղարաքէօփորու, Եղզթըլը, որ կուածալիկ են մի քանի աղաների մէջ և ամէնքն էլ իրենց ուղածի պէս օգտուում են գիւղացուց. այսօր մի աղա կը հրամայէ արտը հերկելու, վաղը միւսը կը պատուիրէ ցորենը ջաղացը տանելու և այսպէս ճանվերջ: Բացի սովորական հարկի կերպարանք ստացած թալանից ու յափշտակութիւնից՝ միշտ անպակաս են, այսպէս կուած արտաքոյ կարգի թալանները:

Օգոստոսի սկիզբներին 2աւուրմէ գիւղից խնուս-բերդից Երզրու աղայի մարդիկը տարան Առաքելի 8 եղները: Յուլիսի վերջերին Էրզրու գիւղացի Մկրէ Աւետեանի 2

եզները և մի կողմ տարան. նոյն Շիւքրիի ծառաները խլեցին և տուճը. քանի օրից յետոյ անտուն մնացած խեղճին իբրև տան գին 2 ոսկի տւին, որ նրա եզների գինն անգամ չէ: Անցեալ տարի նոյն քրդերը տարել են նրա մի մատակը իր քուռակով, երկար աղաչանքից յետոյ մատակը յետ են տւել առանց քուռակի: Ներկայ տարւոյ յունիսին տարան Հարամիկ գիւղացի Տէր Սողոմոնի մատակն ու քուռակը: Սեպտեմբեր 25-ին օրը ցերեկով քշեցին տարան արոսցի Յարութիւն Մակարեանի 25 գառը: Այս Շիւքրին, որ մի քանի գիւղերի աշա է, իր ծառաներով կատարեալ չարիք է տեղացիների համար: Խնուսի Թուչոնք գիւղացի համբոյնէի գայմագամ Սէլիմ բէկի մարդիկը, գարնան Բաղքիկ գիւղից տարան Կրպոյի եզները: Սայը գիւղից տարան 5 եզ վերջը 2 ոսկի փրկանք ստանալով ետ տւին: Համբոյնէ քրդերը այս գիւղերում աւելի ազատ են վարուում, քան իրենց տներում. ամէն դատարկ պատուակի համար գիւղը լեցւում է քրդերով: Շիւքրի աղան մտքում դրել է գրաւել Հասամիկ հայ գիւղը. այդ նպատակով մախից մինչև այժմ Ալդըրվատ համբոյնէի բինբաշին 4 անգամ 80 ձիւտորով եկել է Էլփիս գիւղը, իբր Շիւքրուն օգնելու և մնացել է ամէն անգամ 2-4 շաբաթ: Անկասկած է, որ գիւղացին պիտի հոգայ նրանց և ձիաների ուտելիքն ու խմելիքը: Ժողովուրդը ուժասպառ եղած այսչափ զրկանքներից մի քանի անգամ գանգատ է ներկայացրել կառավարութեան, որը աւելի կատարեցրել է աղաներին, իսկ կառավարութիւնը ինչ ասել կ'օգտէ, որ հազարաւոր անհետեանք բողոքների շարքն է ձգել սրանք ևս: Նա աւելի ձեռնտու է համարում քրդի ուժեղանալը ի հաշիւ հայի: Պակաս կեղտոտ դեր չէ կատարում և Խնուսի առաջնորդական տեղապահ Տէր Բարդուղիմէոս քահանայ Տէր Մարգարեանը, այս կաշառակեր ու մատնիչ վատը: Անցեալ տարի Բուլանուսի Աքրա գիւղացի Հայտարը սպանեց 4 հայ նոյն գիւղից. իրենց գերեզմանատնից հանել տաւ 2 թարմ դիակներ և կառավարութեան տեղեկացրեց թէ սպանեալները ջան-Ֆէդայիներ են, որոնք երկու մարդ են սպանել. գիւղացիների դանդաղութեանց յետոյ, Հայտարից 7 ոսկի կաշառք առնելով հաստատեց նրա խօսքերը: Այսպիսի բացարձակ եղեւնագործութիւնից յետոյ գիւղացիներից 12 տուն փախչում են ուրիշ գիւղեր, թողնելով իրենց տունն ու ցանքերը: Հայտարը բռնել է տալիս դրանցից 5-ին. վերջիններին քահանային դիմած ժամանակ, նա բարկանում է և խրատում հաշտել Հայտարի հետ: Փախածները այլևս չեն վերադառնում և նրանց թողածը մնում է Հայտարին, որից մի շան բաժին էլ տերտէրին է հասնում: Արոս գիւղացիք գանգատեցին իրենց աղա մշեցի վարդով գիւղացի Ալմեայինի վրայ, իսկ Բուռնազ գիւղացի Խնուսի Ձերնակ գիւղացի Մահմատի վրայ՝ նրանց անսանձ վարմունքների համար: Էլփիս գիւղացի Թորոս Հայրապետեանը Շիւքրիի մարդկանց ձեռքով տարած իր մի հօտ ոչխարի, 30 ոսկու և եղբօրը ծեծելու համար գանգատում է Շիւքրիի վրայ. մատնիչ քահանան Շիւքրիից մի ձի և Մահմատից 5 ոսկի կաշառք ստանալով յիշածներին իբրև ըմբոստ է ցոյց տալիս, ասելով թէ դրանք ուզում են որ քրդերը հեռանան, որպէս զի ջան-Ֆէդայիները ազատ գնան գան:

Ահա ձեզ Բրիտանոսի փոխանորդը, որ բռնաւորներին ու վաստակաւորներին պիտի մխիթարէ. սա քահանայ չէ, այլ քրդից էլ աւելի վատ մատնիչ. մի գառնազգեստ

գայլ, որի շուտ վերացումը ժողովուրդի միջև անպայման բարերար հետեւներն են կ'ունենայ: Այսպէս է ապրում այս ժողովուրդը, այսպիսի պայմանների մէջ է քարշ գալիս նա, որ իր թշուառ կեանքի օրերը մի քիչ երկար տւէ: Անմուռնչ, գլուխը ցած ձգած, պիտի տանէ նա իր վրայ բարգաժ անթիւ պարտաւորութիւնները, իր վրայ ծանրացած անարդար բեռը, մինչև բոլոր մահկանացուների համար ճակատագրական մի օր փչէ իր հոգին, մնաս բարև սա է իր համար սև աշխարհին, կարօտ լաւ օրւայ, կարօտ մի արդար վարչութեան:

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ր Ի Կ Ն Ե Ր

ՈՍՏՆՆԱՊԻՆՈՐՈՐԻ ՆԱՄՆԿ

Պետերբուրգ 24 հոկտեմբեր 1902

Հարան շարուն գնում են: Ոտարորիկ, հև տալով հագիւ ծածկած մերկութիւնը ծանր աշխատանքից կուտացած, արևահար մարմնի, կնճոտոտ տարիքից առաջ, բայց վերջին ուժերը լարած՝ քայլում են նրանք: Ոսկրացած ոտքերի քայլածքը հաստատ է, վճռական: Խորունկ աչքերի փայլածքը բերկրալից է, յուսատու:

Քայլում են նրանք: Քայլում են դէպի վաթան, դէպի երկիր, որի սահմանները հրէն է, սեխն են տալիս հորիզոնի ծալքերում, դէպի այնտեղ, ուր այնքան վշտերի մշուշն տակ՝ յոյսերի ծիխն է ծլում:

Ո՞վքեր են դրանք, յհրաբանք՝ բռնութեան փեղից դէպի անհիւրընկալ բռնապետութեան օջախը. քայլող այդ մարդիկ՝ կին, երեխայ, հարս, աղջիկ, ծերուկ, որոնք իրենց առասպիլական աղքատութեան մէջ, տանջանքի, մաշածքի այդ չտեսնուած պատկերի տակ՝ դեռ այնքան կորովով, այն աստիճան յուսալից են:

- Ո՞վքեր են դրանք:
- Հայաստանցիներ:

Վեց տարի առաջ, — կոտորածների տարին էր այդ — երբ արեան փոթորիկը հայ երկրի մի ծայրից մինչև միւսը փչեց, երբ Ա. Պոլսի արքունական սենեակների մէջ յլփացած բռնապետութիւնը իր վախի ու ամօթի սանձերը արձակեց և սկսեց յորդառատ հոսանքը անմեղ արեան, տեղի ունեցաւ այն մեծ փախուղ, որի նմանը վաղուց չէր տեսել ասիական պատմութիւնը: Գաղթականներ չէին դրանք և ոչ էլ փող հանգիստ, նորութիւն որոնող զարիբականներ, որոնք մի երկրից միւսն են թափանում: Փախստականներ էին դրանք: Միող երկիրը, բայց հալածական երկրից: Աշխատող, բայց թեւերը կոտրած: Հողին ղուրբան, բայց աստանդական: Յիսուն հազար էին դրանք, արիւնհարու բռնութեան զոհ գնալ չցանկացողներ, որոնք ապաստանեցին Աովկաս, երբեմն հիւրընկալ և այժմ անհիւրասէր այդ երկիրը: Դառն օրեր քաշեցին: Սև օրեր ահսան: Հայ գեղջուկի փափկութեան կողքին՝ ճաշակեցին կառավարութեան միշտ նենգ, միշտ կասկածոտ հալածանքը, վաղան օրւայ անգիտութեան սարսափը, վերագարձի անսահման կարօտը:

Բայց ահա և դարձը: Դարձ: Որքան ցանկալի, բայց և ողբան ճնշող ու վտանգաւոր: Փակւած ճամբաների բացումն չէ այդ, որին 7 տարուց ի վեր սպասում է աստանդական ժողովուրդը

և ոչ էլ մի խղճահարուած հրաւեր, ստացւած թիւրքաց կառավարութիւնից, կամ այդ կառավարութեան այնքան մտերիմ՝ հայկական պատրիարքարանից: Ոչ: Ստիպողական մի դարձ, յիշատակական՝ հալածանք, նենգամիտ մի խաղ, դրւած, ինչպէս յաճախ, օրէնքի խաբուսիկ ձևերի տակ: Մանրամասները, ստացւած թիֆլիսից և սահմանազխից, այն տխուր վայրերից, ուր հալածականների ախիւրը աշնանային փոթորկի դաշնակն է կազմում, բաց են անում ողբերգական տեսարան, լուսաւորւած այնպիսի օտարօտի դոյներով, որ միամիտներին անհաւատալի և խորթափանցներին՝ չափազանց պիտի թւին: Ասկայն տեղեկատուները վստահելի են, քիտակ դործին:

Ազմինստրատիվ խաղեր: Օգոստոսի հրամանը՝ դառնալ անմիջապէս թիւրքի, եթէ չեն ուզում ուսումնասիրող լինել կառավարչապետի խոստումը՝ դիւրութիւններ տալ դնացողներին, կարսի նահանգապետի ճառերը, այնքան սփոփիչ և այնքան մեծահոգի, վերջապէս հանգստեցնող թեան թողաւութիւն — մի շաբաթից յետոյ արգելելու համար — և ոստիկանութեան ներդրումութիւնը՝ թիֆլիսի կայարանում՝ հնչող «մնաս բարոյների» ու «դնաս բարոյներին» — այս բոլորը ա դ մ ի ն ս տ ր ա տ ի վ խաղեր էին, խաղեր նախամտածած, գաւազրի, նենգաւորանիսիճ՝ ծաղր, որի տակ թագնւած էր այս դժոխային միտքը՝ «Կը դնաք, կը տեսնէք»:

Եւ իրօք: Գնացին ու տեսան: Ասթան չհասան՝ նրա կարօտով տապակողները: Չը գրկեցին սպասելուց աչքը ջուր կտրած մայր ու քոյրերին: Չ'արժանացան արիւնոտ, բայց քաղցր վայրերին... Դեռ սահման չհասած, որտաց կօզակի հրամանը՝ «Կանգնիր»: Եւ կանգնեց մերկ ու քաղցած կարաւանը: Եւ ահա այնտեղ, բնութեան անպաճորճ բեմի վրայ սկսեց քաղաքական ողբերգութիւն, անյատակ վշտի և անձայր բռնութեան անպատմելի միջոցը...

Երեք օր տեւեց հալածական կարաւանի սպասողական տանջանքը: Բայց այդ երեք օրը՝ երեք ամիս, երեք տարի թւաց: Անվերջ էր նա, ինչպէս բռնապետութեան ինտրիգը: Եւ ո՞րն էր այդ ինտրիգը: Այն, որ այդքան բազմութիւն դժոխային տանջանքներով դէպի սահման քշելը՝ մի նպատակ միայն ունէր — ասել նրանց՝ «Տեսէք, չէք կարող սահմանը անցնել ուրիմն ուրիշ ձար չկայ, բայց եթէ ուսումնասիրող լինե՛լ»: Ռուսապետակ, որքան ծանր, որքան վտանգաւոր հնչեց այս անգամ այդ ծանօթ բառը՝ փախստականի ականջին: Տրամադրութիւնը թշնամական էր. և բազմութիւնը գրոհ տեց, ընդգիմացաւ...

Ինչ անել, ահա հարցը, որ տրեց սահմանազխին դարսնած՝ վտանգից դողացող խուժանի առջև: Ինչ անել: Եւ ահա լուր եկաւ, որ Էջմիածնի ալեգարդ Կովիւր խորհուրդ է տալիս իր «ողջարներին»՝ դնալ Պարսկաստան, կամ այնտեղ հաստատել և կամ այնտեղով երկիր մտնել: Բայց արդեօք հնարաւոր է այդ: Հնարաւոր է, ասում էին, որովհետեւ այդ քաղաքական խորհուրդը տեւել է հայոց եկեղեցու ներկայացուցչին պաշտօնական բարձրագոյր մի անձ, նոյն ինքն Ֆրէդէ: Այն տեսակցութեան ժամանակ, որ նա ունեցաւ թիֆլիսում՝ վեհափառի հետ դադիականական խնդրի առիթով: Միամիտները հաւատացին — դժբախտը կ'ըբ չէ հաւատացել — և ձամբայ ելան դէպի Էջմիածին, Ատրպատական չլեւոյ յոյսերով: Չորս օր տեւեց այդ ձամբարդութիւնը: Քաղ-

ցած, յոգնած, ենթակայ հիւանդութեան, ուժասպառ, անքուն, անկարող մի վայրկեան անգամ դադար տալու խղճով գլխներին, բայց սրտապինդ, յուսալու, թէ «ահա կը հասնենք սահմանին, կը մտնենք մի նոր երկիր, և կը պրծնենք այս անվերջ տանջանքներից»...

Ունայն յոյսեր, ցնորական երազներ: Նոյնիսկ հայկական կրօնական կենտրոնի պատերի տակ, ուր հալածականները ամենից քիչ էին սպասում կ'ն ու տ ի ներկայացուցիչներին, դարձեալ տնկեց կօզակը և որտալից գոչով հրամայեց՝ «Կանգնիր»: Եւ նորից կանգնեց համրաբայլ վիշտը՝ «Ռուսապետակութիւն, ուսումնասիրողութիւն»: Սակայն էլ ականջ չէր մնացել լսելու, և ոչ գլուխ՝ հասկանալու համար: Անասան էր բազմութիւնը, ինչպէս ինքը տանջանքը, անընկճելի, ինչպէս թագաւորող անարդարութիւնը:

Եւ այժմ... աստանդական, անտէր՝ քչում է նա, այդ հալածական բազմութիւնը՝ մի նահանգից միւսը, անհիւրընկալ Էջմիածնից՝ անձար կարս, կարսից՝ արտասուալայ Բասենի խորքերը. Բասենից՝ մշուշապատ լեռները: Հայկական արիւնոտ իրականութիւնն է դա. հայ ժողովրդի տասն տարւայ ողբի ուրակները, որ պատում է կովկասեան սահմաններում, վերջին արարածքը այն ժողովրդական պայան ողբերգութեան, որի գլխաւոր դերակատարները այլևս արիւնը ու շտ քրդերը և քաղցած գայմապանները չեն, այլ պճնւած գահերի վրայ բազմած թագակիր ոճրագործները...

Ու մի օր, երբ վերջուած, կատաղութեան գերի՝ պատմեցի այս բոլորը Փրանսիացի մի ծանօթի, լաւ տեղեկ մայրաքաղաքի դիպլոմատ շրջաններին, նա, զարմացած հայկական միամտութեան վրայ, դառն շեշտով այս գաղտնիքը պատմեց. «Դեռ հոկտեմբերին՝ Փրանսիական արտաքին գործերի մինիստրը՝ Կ. Պուլի իր դեսպանի միջոցով՝ դիմեց սուլթանին, խնդրելով, կամ աւելի ճիշդ՝ առաջարկելով ներս ընդունել վերագարձող գաղթականներին: Դա առաջարկ էր և ոչ խնդրք, որովհետեւ պ. Դելկասէ համոզւած էր, որ իր այդ քայլը արձագանք է Պետերբուրգի արքունիքի տրամադրութեան: Սակայն սուլթանը մերժեց, և մերժեց՝ յայտարարելով այս նշանաւոր նորութիւնը. «գաղթականների խնդրը արդէն վաղուց կարգադրւած է իմ և ուսումնասիրողութեան մէջ»...

Ապշած, համարեա շանթահար՝ երկար, շատ երկար նայեցի Փրանսիացի հայասերի աչքերին: Եւ նա, սրտագետ, գուշակեց իմ յոյզը և գլուխը շարժելով կրկնեց. «Այո, արդէն վաղուց կարգադրւած էր»:

Յետագայ իրողութիւնները պերճաբան ապացոյց եղան այդ յայտնութեան, դառն և խրատական միանգամայն:

Որպէս փոխեցին ժամանակները: Կար ժամանակ, մինչև իսկ այն օրերին, երբ ուսական տիրապետութիւնը, ի դէմս ուս դիւնորականութեան, նոր էր երևան եկել թիւրքական և պարսկական սահմանազխներին, հայ ժողովուրդը ոգևոր քրիստոնէական զգացմունքներով տարւած Մոսկովայի թագաւորութեան իդէալներով, խաչ ու խաչվառով ընդունեց սուրի և վառօրի հերոսներին և նետեց նրա դիրկը: Եւ սկսեց հայկական գաղթը դէպի Ռուսաստանի սահմանները: 1828-ին, 1854-ին, 1878-ին ինքը հայն էր, որ աղբւրում, խնդրում էր իրեն ներս առնել հպատակ գրել, դնել ուսական դրօշի տակ: Նոյն սահմանազխներում, ուր այժմ հնչում է կնուտը, երբեմն եղբայրական համբոյնների ձայներ էին

լուսու՜մ... Սակայն դարը փոխեց, փոխեց և տեսարանը: Այժմ՝ հայն է փախչում, խոյս տալիս, թիկունք դարձնում՝ ուսաստանատու թեան: Ահա մի բուռն ժողովուրդ, հազիւ ստի վրայ, որ դերագասում է դառնալ արեան օջախը, դէմ դնել կուրծքը դարևոր թշնամուն, խմել հալածանքի և դառնութեան բաժակը, քան մնալ և ուսաստանատու գրեցե՛լ...

Ի՞նչ է արդեօք սա. ամբողջային մի անդիտակից, անմիտ, հօտային փախ, թէ քաղաքական մի այլակերպութիւն, քաղաքական մի նախագոյացում, որ ելեքտրական ուժով ցնցում է կոտորածի մնացորդներին: Անբացատրելի մի երկինջ է այդ, ներշնչած արդի բեթիմով, թէ այն որ քաղաքական անապատ վերածնունդ մի ժողովուրդ դերագասում է մեռել կուռով, քան քաղաքական մահով, զոհել բացարձակ բռնապետութեան, քան մի բռնապետական բեթիմ, որ լափում է ժողովուրդներ մի այլ ճանապարհով... քաղաքական սպանութեան ճանապարհով ընկնել իբրև նահատակ և ոչ իբրև թուլամորթ կամ՝ ձուլման ենթակայ անդոյն մի զանգւած...:

Տխուր են այս խոհերը և անլուծելի:
Բայց կենդանի փաստերը և անհերքելի:

Տարիները կը գան, կ'անցնին, բայց արտասուաշարժ այս փաստերը կը մնան: Տանջող ազգերը մեծ յիշողութիւն ունին: Որդիք չեն մոռանայ հայրերի դիմով անցածները և անցնող սերունդի սերն ու հնազանդութիւնը, տարիներ յետոյ, կը փոխարկւի ատելութեան ու ըմբոստութեան, և մի օր, երբ յբաժակը կը լքուի, անարգարութեան ու հալածանքի գատ գատ օղակները, իմի ձուլած, կը կազմեն դժգոհութեան շղթան, որով պիտ կապի, կաշկանդի բռնապետութեան ձեւքն ու ոտքը:

Բռնութեան, անսանձ անարգարութեան, բարձրագոյ հալածանքի սեւ բեթիմն է, որ պիտի ձուլէ այդ փրկարար շղթան: Այդ բեթիմի շնորհիւն է, որ խաղաղականը դառնում է յեղափոխական, երկրագործը՝ զինագործ, սերմնացանը՝ սուբաջան...:

11
25 նոյեմբեր

Արարատեան դաշտի նոյն բազմատանջ վայրերում, ուր հալածական դաղթականները հանգստի անկիւն չգտան, երևաց մի հիւր, որի նմանը վաղուց չէր տեսել այդ երկիրը: Ցանջանքին յաջորդեց յխաղաղութեան՝ աւետարները — ստուածային սպասուորը, որ միակ ապացոյցը պիտի լինէր այդ ապարատ երկրում, որ այն, գոյութիւն ունի արգարատէր Աստուածը, թէ և այնքան հեռու, որ չսեց և չի լուսւմ այդքան բուռն աները, տանջող ժողովուրդի այդքան սրտաբեկ աղերսանքները: Ո՞վ է յխաղաղութեան՝ այդ ներկայացուցիչը: Եկեղեցու հովիւ է դա, վրաստանի էկզարխ Ալեքսէյ, որ պտոյտի է գնացել հայկական նահանգները, հնչեցնելու երկնքի օրհնութեան մեղեդիներ...:

Եւ երբ կովկասեան լրագրիները լուր բերին, որ վրաստանի յհովիւն՝ այցելեց Եջմիածին — հայկական կրօնական կենտրոնավայրը, ուր սիրալիւ ընդունելութեան արժանացաւ նրա պետից, որի հետ երկու եկեղեցիների փոխադարձ սիրոյ և բարեկամութեան մասին ճառեր փոխանակեցին, մենք զգացինք ներքին սփոփանք, մի միթմարութիւն ի դիմաց այն երկարատե թշնամանքի,

այն յաճախ դաղտնի, յաճախ բացարձակ անհամբերութեան, որ սուսական եկեղեցին՝ մշտեմ միապետ կառավարութիւնից, վկայել է ուրիշ եկեղեցիներին և դրանց թուում հայոց լուսաւորչական եկեղեցուն:

Սակայն որքան կարճատե, տիրուն և խաբուսիկ ելաւ այդ սփոփանքը, սպասելիքների այս նոր յոյսը, Հաշտութեան, փոխադարձ յարգանքի հող պատրաստելու նպատակով չէ, որ միապետական ուղղափառութեան վեղարակիր ներկայացուցիչը գնաց Եջմիածին և Արարատեան երկիրը, այլ ընդհակառակը, կաշկանդած հայկական եկեղեցու աւերակների վրայ առանձին եկեղեցի հիմնելու, կատարելու մի պաշտօն, որ եթէ հաճելի չէր միապետութեան գերի դարձած Ամենակարողին, գէթ հաճելի է Ամենակարող միապետութեան:

Գժար և անզգոյշ կը լինէր հաւատալ, եթէ լուրիւր լինէին մասնաւոր աղբիւրից, արդիւնք երկիրից ամէն բան չափազանցնող ամբոխի շռուկներին: Ափսոս: Փաստը աներկբայիլ է, որովհետեւ նա արձանագրած է կովկասեան կառավարութեան պաշտօնական օրգանում, յՎազկազ՝ լրագրի մէջ, դրած է կզարխին ուղեկցող մի հոգևորականի՝ աւագ-քահանայ Վաստրգոյի ձեռքով, յայտնի իբրև ժիր քարոզիչ և միսիօնէր, գրած, ինչպէս հաւաստում են, նոյնիսկ էկզարխ Ալեքսէյի գիտութեամբ, և եթէ կամիք՝ խմբագրութեամբ:

Ահա թէ, իմիջի այլոց, ինչ ենք կարդում էկզարխեան ճանապարհորդութեան այդ յկիսապաշտօնական՝ նկագրի մէջ.

«Սուպատիւրի 22-ին հովապետը այցելեց Ալեքսանդրօպոլի բոլոր զին սրահան եկեղեցիները և մերձակայ Ալեքսանդրօպոլի գիւղում հիմնեց մի եկեղեցի սասագատանութիւն ընդունած հայերից նոր կազմած համայնքի համար: Հայերի մէջ այդ շարժումը գէպի սուսագատանութիւն՝ սկսել է 20 տարի առաջ, այժմ նա կենդանի է և զօրեղ, և եթէ չլինէին կեանքի այն ճնշող հանգամանքները, որոնց մէջ ապրում են սուսագատանութիւն ընդունած հայերը, որոնք միայն այն գիւղերում իրենց նախկին հաւատակիցների հետ ամէն տեսակ անախորժութիւններ են կրում նրանցից՝ այդ շարժումը լայն ալիքի նման կը տարածէր Երևանի նահանգում: Հասարակ ժողովուրդը չգիտէ այն տարբերութիւնը, որ կայ հայ-լուսաւորչականութեան և սուսագատանութեան մէջ, և խոկապէս դա այնքան էլ մի՛ծ չէ, որ անանցանելի անդուռը գառնապա Անդուռը կամնում են դարձնել նրան քաղաքականութեան պարագոյ տարրերը, զիստ որակէս ինտելիգենցիայից, բայց ժողովուրդը գործ չունի նրանց հետ: Վերջին ժամանակ կազմել են մի քանի ծխեր սուսագատան հայերից: Նրանց համար ժամկետութիւն է կատարում բացում են սուսագատաններ: Արմենիասարայիան հնարաւ որ համարեց սուսագատան հայերին գուրս հանել իրենց իրենց նախկին տեղերից և կազմել սուսանձին զիւղեր: Առայժմ կազմած են Ալեքսանդրօպոլի և Ալիսո գիւղերը: Թագաւոր կայսրը իր սուսագատանութեամբ 5,000-ական բուրձի նւիրեց այդ գիւղերում եկեղեցի-սուսագատաններ կառուցանելու համար: Վրաստանի էկզարխը միւս օրը հասաւ Ալեքսանդրօպոլի երեկոյեան ժամին 4-ին և երկար խօսակցեց սուսագատան հայերի հօտի հետ: Աւագ-քահանայ Վաստրգոյ, Վրաստանի էկզարխի յանձնարարութեամբ քարոյ իտեց ժողովուրդին ս. Գրիգորի, հայերի լուսաւորչի կեանքի մասին, և սարգեց այն միտքը, թէ ս. Գրիգորը սպրտել էր այն ժամանակ, կրք հայերը բամանած չէին ուղղափառ եկեղեցուց, և թէ իսկական գրիգորեաններ համարձ Լուսաւորչ Գրիգորին, իրաւացի կերպով կարող են անուանել հայերից նրանք, որոնք ընդունել են սուսագատանութիւն: Արմենիաւ այդ երկին սուպատները 30-ի նախընթաց երկին էր, կրք սուսաց եկեղեցին»

տնտեսմ է: ու Գրիգորի, Մեծ-Հայաստանի Լուսաւորչի յիշատակը, ուստի այսուհի էլ մայրիկանք կատարուց այդ սուրբի յիշատակին հ. տաճար էլ հիմնուց նրա անուանով. Զուգապիպով ինչոր դարմանալի էր Տայ Առուած, որ ու Գրիգորի ազօրքներով անի հայերի սուսապատան հօտը»:

Ինչ անօրինակ ըբուծիւն:

Ար ժամանակ, երբ ուսագաւանուծեան պրօպագանդը կատարուում էր գաղտնի, անուղղակի ճանապարհներով, դէպի այլակրօնները ցոյց տրուող որոշ յարգանքի վարագոյրի տակ. նա կատարուում էր բանտերի մէջ ինչպէս օրինակ Երեւան, ուր կրօնափոխ բանտարկեալներին խօստանում էին ազատութիւն գօրծանման Սիբիրից, դիւղացիների շրջանում, դատարանների շէքերի վրայ, ինչպէս Սուրբաշուի գաւառում, ուր հաւատափոխներին երազել էին տալիս անվերջ հող և հարստութիւն. քաղաքների մէջ, ուր իբրև վարձ կրօնափոխութեան խօստանում էին կառավարչական կապալներ, զանազան դատաստանական վէճերի յաղող վախճան, կամ ապահով պաշտօն և ուճիկ՝ ունէ հիմնարկութեան մէջ. . . Իսկ այժմ, կորցրած ամօթի վերջին նշողը, խելագած խղճի վերջին ճիչը՝ աներկիւղ և համարձակ՝ այդ պրօպագանդը կատարուում է պաշտօնապէս, հրապարակով, էկզալիսի բերանով, պաշտօնական օրգանի էջերում, կառավարական աշակցութեամբ, կայսեր տւած փողով և հովանաւորութեամբ:

Սա է ուսաց տիրապետութեան հարկւրամեակի նորագոյն պարծանքը, միապետութեան և միապետ եկեղեցու յիշատակելի առաջադիմութիւնը, արժանի դժբախտ ազգի հաւատարիմ՝ երախտագիտութեան և քաղաքակիրթ մարդկութեան որոտընդօստ ծափերին. . .

Եւ ամէկիստ եմ, և հետևաբար՝ ոչ-բարեկամ բոլոր եկեղեցիներին, ուրմն և հայոց եկեղեցուն: Սակայն եթէ ինձ հարց տան, թէ որն է գերագասելի՝ հայոց եկեղեցին թէ ուսացը, ես վայրկեան անգամ չեմ տատանի և կը պատասխանեմ՝ «հայոց եկեղեցին»: Երկու եկեղեցիներն էլ կապանքներ են մարդկային մտքի ազատ ու լայն զարգացման, արգելք՝ փիլիսոփայական բազմակողմանի մտածողութեան: Սակայն, մինը, եթէ ներելի է այս կոպիտ համեմատութիւնը, կապանք՝ շինած թօկից, և շատ հեշտ կտրելու համար, միւսը՝ ձուլած երկաթից, ամուր, և շատ դժուար փշոջելու համար: Մէկը, հայոց եկեղեցին, ինքը ազօթող ժողովուրդն է. միւսը՝ ուսաց եկեղեցին, ինքը հրամայող միապետութիւնը: Մինը՝ մըրմունջ, մեղերի. միւսը՝ «պրիկագ», երկիւղ: Մինը տգէտ ժողովուրդի հաւատը, միւսը կոպիտ միապետութեան աշտնաբը, որով նա բթացնում է ուս ժողովուրդը առանց կարեկցութեան, պահելով իր ահելի զօրաբանակին կից՝ մի այլ նորաձոյլ բանակ՝ ուղղափառ հոգևորականութիւնը, այս միաժամանակ ստրուկ և ճնշող կազմը:

Անբաւական ուս խելճ ժողովուրդի շրջանով միապետ ուղղափառութիւնը իր գէնքը այժմ դարձնում է դէպի հայ ժողովուրդը և այս անգամ բացարձակ, առանց վարագոյրի Պատմական ստախօսութիւն, անբարտաւան ինքնագովութիւն, հայհոյանք դէպի այն բոլորը, ինչ սուրբ է, նւիրական զբաղմունքի, հաւատի համար — ահա նորագոյն եղանակը գործելու, նկարագրուած Աստուրիքով «անկեղծ» յօբաճններում: Ահա մի լայն ճանապարհ, անբարոյականացնելու տգէտ, հաւատացող ժողովուրդը, որին կառավարութեան գործակալները վարժեցնում են հողի, փողի, հեշտութեան, նոյնիսկ մեղալի

և օղիի համար վաճառել խիղճը և զգացմունքը, միակ անկեղծ բանը, որ կայ և կարող է լինել արեօսի մէջ, պատրաստելով նրան մի վեճակի, որ անասնական է և գերազանցապէս անբարոյականացնող Գա կրօնական էվոլուսիօն չէ, այլ վաճառք. դա ժողովուրդի կրթութիւն չէ, այլ բռնապետութեան զօրեղ պատանդան. . .

Եւ եթէ մի օր՝ մի հայ երիտասարդ, նոյնիսկ ոչ «քաղաքականութեամբ պարագողներէց», կամ երիտասարդ մի վարդապետ մտնի Ալեքսանդրօվչա և Ագինօ ու ասի՝ «հայեր, ոչ մարդկանց երկրի վրայ և ոչ Աստուծուն երկնքում հաճելի չէ այդ խաբբայութիւնը հաւատի անուսով», — այն ժամանակ, օ՛, այն ժամանակ, ճահիճը կը շարժուի — գաւառապետը կը զարնի հեռագիրը, էկզալիսի Ալէքսէր, ստանձնած ժանդարմի պաշտօն, կը կցի այդ հեռագրին իր հայրական կարծիքը, Աստուրիքով այդ կարծիքը ձեւքին՝ կը վազի ժանդարմների վարչութիւն. . . կը բացուի նշանաւոր գիրքը, որի կազմի վրայ դրօշմած է «Արմենսկօէ դէլօ» (հայոց գործը) և քաղաքական պարտեալներին կաւելանայ էլի մէկը, այն «ոչ այնքան հեռու վարքերում», ուր հազար ու մի եկեղեցի կայ, բայց ոչ մի Աստուած չկայ:

Է. ԱԿՆՈՒՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԳԻՐԸ ԱՌԱՅՐՈՒՄԻՆԿԱՐԻԱՑՈՒՄ

(ԴԱՄԱԿ ԲՈՒԿՈՒՊՆՍՏԻՅԸ)

Արմենացի Die Information-ի մէջ հրատարակած է հետևեալ թղթ-թակցութիւնը Բուկովինայից (8 դեկտեմբեր 1902).

«Գալիցիայի և Բուկովինայի հայ գաղութների մէջ վերջերս նկատուում է շարժում՝ ի նպաստ մայր-երկրի հայերը, ինչպէս յայտնի է, ապրում են արտեղ դարերից իվեր և գրեթէ բոլորովին լեհացած են: Նրանք առհասարակ անւանում են իրանց Armenopolen (հայ-լեհեր): Նրանք շատ երախտագէտ են իրենց լեհական հայրենիքին, որը մեծ կատաստրօֆներից ազատած իրենց պապերին այնքան ընդարձակ հիւրասիրութիւն է ցոյց տուել: Սակայն դրա հետ միասին հայերը չեն կարող անզգայ լինել դէպի իրենց արիւնակից եղբայրների տաւապանքները, — եղբայրների, որոնք հեծում են արևելեան ամենաարիւնընուշտ բռնապետի լծի տակ:

«Աերջին երկու ամսւայ ընթացքում խլտում է ընկել այդ գաղութների մէջ: Մի հայ պրօպագանդիստ շրջան արաւ Գալիցիայում ու Բուկովինայում, ժողովներ կազմեց, ատենախօսութիւններ արաւ, նկարագրեց իր լեհական ազգակիցներին՝ թիւրքահայաստանի ողբերգական վեճակը, Աբգիւլ Համիդի կազմակերպած դաւադրութիւնը հայ ցեղի դէմ, ժողովուրդի լիակատար բնաջնջման ծրագիրը Գաղութները յուլեցին. զանազան քաղաքներում կազմեցին տեղական կօմիտէներ: Արոշեցին իրենց ու ժերի համեմատ աջակցել թիւրքիայի ճնշած եղբայրակիցների դատին: Չերնօվիցի լեհահայերը դուժարեցին մի մեծ ժողով որին մասնակցում էին և դրսից եկած պատգամաւորներ: Միաձայն որոշեց ուղղել Ռալիս սրատի (աւստրիական պարլամենտ) լեհահայ պատգամաւորութեանը մի յիշատակագիր: Աերջինս խմբագրեց անմիջապէս և ապա մի ամբողջ շաբաթ ստորագրու-

Թիւններ հաւաքեցցին Գալիցիայում ու Բուկովինայում: Ստորագրողների շարքում գտնուում են շատ բարձրաստիճան անձնաւորութիւններ:»

Ահաւասիկ այդ հակիրճ յիշատակագիրը, որ տպագրւած՝ ուղարկել է աւստրիական Ռայխսրատի անդամներին (Թարգմանում ենք գերմաներէն բնագրից) .

Չնրդ Բարձր Բարիձնութիւն,

Բերլինի դաշնագրի ՅԱ-յդ յօդուածը ասում է .

«Բ. Դուռը պարտաւորում է՝ անյապաղ իրագործել հայտնակ վաւաններում այն յարկնորոգումներն ու սեփօրմները, որ պահանջում են սեղական պէտքերը, եւ ապահովել հայ ազգայնակութիւնը քրդերի ու չէրքէզների դէմ: Նա պարտաւորաբար կը հազարդէ՝ այդ ուղղութիւնով արած յոր քայլերը պետութիւններին, որոնք կը հսկին նրանց դարձապարտութեան վրայ»:

«Թէ ինչպէս կատարուց այդ հսկողութիւնը, յայտնի է ամբողջ աշխարհին եւ բաւականաչափ տղայտղանում են ամենազարտուրկի կտորածները, ուր հարիւր հազարաւոր անգէն հայեր մորթուելին, որպէս զոհեր, Եւրօպայի աչքերի առջև:»

«Իբրեւ հայեր, բայց նախ եւ սուաջ իբրև մարդիկ, որ կիրակից ենք ամէն մի թշուառութեան—իբրև հայեր, որ բախտ ունենք աւստրիական հպատակ լինելու եւ սողասօրէն մեր ձայնը լսելնելու,—ինդրում ենք թախանձաղին Չերդ Բ. Բարիձնութեանը՝ բարձրացնել Չերկարող ձայնը թիւրքայ լծի տակ տնքայող հայերի թշուառութիւնը մտղմուլ համար Առիթները չպիտի պակսին Չերդ Բ. Բարիձնութեանը պարտմնատը եւ պատգամաւորութիւնները (Die Delegationen) ու չպիտի կը լինին Չերկայնին, որը կը լսւի եւ հաւանութիւն կը ստանայ Աւստրիայի սահմաններից դուրս:

«Յոյս ունենք, որ Չերդ Բ. Բարիձնութիւնը՝ ներշնչւած հայերի ծանօթ տառապանքներով՝ պիտի կատարէ մի ինդիրքը:

(Հարեւաւոր ստորագրութիւններ)

Չերձովց
1902 Նոյնմսնր

Այդ յիշատակագիրը լոյս տեսաւ Ալեքսանայի Neue Freie Presse-ի և ուրիշ թերթերի մէջ:

Ունգարիայի մայրաքաղաքում ևս հայկական խնդիրը յուզեց առաջին անգամը հրապարակօրէն անցեալ դեկտեմբերին: Մեր ընկեր Արանդեան՝ լեհասայ գաղութներից այս կողմերը անցնելով՝ խորհրդակցութեամբ Ունգարական պարլամենտի նախագահ՝ կոմս Ապօնիի, Ֆինանսների մինիստր Լուկաչի և մի շարք պատգամաւորների հետ՝ որոշել էին կազմել ունգարա-հայ կոմիտէ, որը յարելով միջազգային հայասէր կոմիտէին՝ սիստեմաբար պրօպագանդ մղէր յօգուտ հայկական ունգարների:

Պի է ո Ա ի ա ո ի Բուդապեստ գալը աւելի ևս տաքացրեց մաջաւ. հայասէրներին և դեկտեմբերի 14-ին պարլամենտի դահլիճներից մինում, ակադէմիկոս և հռչակաւոր ձանապարհորդ կոմս Ջիչիի նախագահութեամբ տեղի ունեցաւ «Պրօ Արմէնիա» ի խմբագրապետի առաջին կոնֆերանսը հայոց հարցի մասին: Ներկայ էին՝ նախագահ Ապօնի և բազմաթիւ պարլամենտական գործիչներ, որոնց շարքում մի քանի ունգարահայ պատգամաւորներ՝ նախկին մինիստր Գանիէլ Արմենոպօլի պատգամաւոր կոմս Կարաչօնի, Պօպ Գեյզա և այլն:

Շատ զգոյշ ու չափաւոր տօնով՝ Կիառ ներկայացրեց՝ հիմնելով լոկ դիւանագիտական դօկումենտների վրայ՝ Ցաճկահայաստանի արդի վիճակը, անցեալ աղէտները, ներ-

կայ հարստահարութիւններն ու բնաջնջման ձգտումները: Փակագծի մէջ նկատենք, որ Ունգարիայում դեռ ևս շատ ուժեղ են համակրութիւնները դէպի Ցաճկաստանը, որը եղել է միշտ անկեղծ բարեկամ մաջաւներին, երբեմն նոյնիսկ ազատ ապաստան մաջաւ փախստականների համար:

Այդ հանգամանքը յիշեցրել էր մեր ընկերոջ ինքը նախագահ Ապօնի, որը այնուամենայնիւ անհրաժեշտ էր սեպել նոյնիսկ թիւրքի շահի տեսակէտից, հայասէր պրօպագանդը և հայկական ունգարները իրագործումը: Այդ վերին աստիճանի համակրելի անձնաւորութեան շնորհիւ էր, որ հնարաւոր եղաւ մտնել զանազան շըրջաններ, ծանօթութիւններ կապել, մաժուլի ներկայացուցիչներին դրաւել և այլն: Նա ոչ միայն ամենասիրած և ամենաժողովրդական մարդն է այսօր Ունգարիայում, այլ նա մեծ յարգանք է վայելում և արտասահմանեան քաղաքական շըրջաններում: Չը նայած իր փափուկ պաշտօնի անպատեհութիւններին՝ նա սիրով ու եռանդով նպաստաւորեց հայկական պրօպագանդի սկզբնաւորութիւնը իր երկրում, առանց տատանելու նա առաջարկեց ազգային գերագոյն պաշտօնական հիմնարկութիւն—պարլամենտը իբրև ժողովատեղի և նոյնիսկ հրահանգեց, որ նիստի միջոցին բաժանեն պատգամաւորներին հրաւիրատուները հայկական կոնֆերանսի համար:

Կիառի զեկուցումը խոր տպաւորութիւն թողեց բոլոր հանդիսականների վրայ, որոնք—զարմանալի և ցաւալի հանգամանք—կարծէք նորութիւն էին լսում: Կիառից յետոյ կոմս Ապօնի խօսեց ընդհանուրի կողմից. «յիշատակած փաստերը, ասաց նա, այնքան ակներև են և այնքան վշտառիթ, որ աւելորդ է նոր հարցումներ տալ պ. Կիառին», ապա պատկառելի կոմսը շեշտեց, որ անհրաժեշտ է Ունգարիայում ևս սկսել պրօպագանդ:

Մտքերի կարճատև փոխանակութիւնից յետոյ՝ ժուրնալիստների ակումբի նախագահ՝ պ. Աեսսիի առաջարկութեամբ որոշեց երկու օր յետոյ գումարել մի երկրորդ ու աւելի մեծ ժողով, որը և կայացաւ նոյն Աեսսիի նախագահութեամբ. ներկայ էին մամուլի բազմաթիւ ներկայացուցիչներ և պարլամենտի անդամներ:

Չը մոռանանք յիշել, որ առաջին ժողովի մանրամասն արձանագրութիւնը հետեւեալ օրը հեռագրի ձևով շըջան էր արել արդէն Աւստրո-Ունգարիայի ամբողջ մամուլի մէջ: Թիւրքաց դեսպանը, ինչ ասել կուզէ, սաստիկ յուզուել է: Յանկարծակիի գալով և մանաւանդ ապշած կոմս Ապօնիի մասնակցութեան փաստից՝ նա հապճեպով դիմումներ էր արել ուր հարկն է և միաժամանակ Բուդապեստի մէջ շարժման մէջ էր դրել իր ծառաներին: Մի քանի օր շարունակ ֆէսաւոր մութ անձնաւորութիւններ սլքտում էին—ո՛վ անմիտ բռնապետութիւն—, «Պանօնիա» հիւրանոցի շուրջը, ուր պէտք էր լրտեսել Համիդի թշնամիներին: Չեմ ուզում երկարօրէն ծանրանալ անցած-դարձածի վրայ. ասեմ միայն, որ թէ՛ Ալեքսանայի տաճիկ դեսպանը և թէ՛ Բուդապեստի տաճիկ հիւպատոսը, ամէն ջանք դործ դրին՝ վիժեցնելու Կիառի երկրորդ ատենախօսութիւնը ժուրնալիստների ակումբի մէջ ապա և, անշուշտ, արտաքսել տալու «պփտատօրներին»: Անստորագիր նամակներ ու սպանալիքներ էին տեղում թիւրքերի կողմից կոմս Ջիչիի, Աեսսիի և անշուշտ նաև ուրիշների հասցէին: Այդ բոլոր մքթնայութիւնները ապարդիւն անցան, որովհետև Ապօնի մերոնց հետ էր:

Այնուամենայնիւ ունգարական կառավարութեան գլուխ մինիստր-նախագահ Սէլլ թիւրքական և ուրիշ ճնշումները տակ ստիպած եղաւ կիսապաշտօնապէս յայտարարել որ նա համարում է հայկական պրօպագանդը այժմ անպատեհ և անթոյլատրելի:

Մենք ամենահաստատ աղբիւրից գիտենք, որ մինիստրի նոյնիսկ այդ ակամայ քայլը խիստ վայրոյթ է յարուցել պարլամենտի ամենականաւոր գործիչների մէջ, որոնք—իրենց հանդիսաւոր խոստման համաձայն—ժուռնալիստների հետ ձեռք ձեռքի տաւած՝ պիտի կատարեն իրենց մարդկային պարտականութիւնը: Ունգարական Գ է Լ է Գ ա ս ի օ ն ի մի քանի անդամներ խոստացել են՝ դարնանք — երբ կայսրութեան երկու մասերի Գ է Լ է Գ ա ս ի օ ն եր ր ը պիտի գումարւին՝ կոմս Գօլուխօվսկուց հաշիւ պահանջելու տարւայ արտաքին քաղաքականութեան մասին — հայկական խնդիրը հանդէս բերելու: Մաջառ գործիչների այդ որոշումը կարեւոր է առաւել ևս այն պատճառով, որ Ունգարիան Հաբսբուրգեան կայսրութեան արտաքին քաղաքականութեան խնդիրների մէջ գերակշռող դեր է խաղում:

Նոյն խոստումը տւել են մերոնց՝ աստրիական դէլեգատիօնի երկու կարեւոր անդամներ՝ կոմս Գէրուշիցկի և պատգամաւոր Բարվինսկի:

Աստրիական պարլամենտի մէջ՝ լեհահայերի ծանօթ յիշատակագիրը ստանալուց անմիջապէս յետոյ՝ արդէն երկու անգամ հարցապնդումներ եղան զանազան պատգամաւորների կողմից—առաջինը խօսեց պատգամաւոր Բրայտէր—տաճկահայոց աղետների և Աստրիայի պարտաւորութիւնների մասին: Բաւական մանրամասն նկարագրեց թիւրքահայերի արդի վիճակը, հարկային սիւսէմը, թալանի և աւերման քաղաքականութիւնը:

Սակայն այդ տեսակ հարցապնդումները — խնդիրը յուզելուց զատ, որ անշուշտ նոյնպէս ունի իր օգտակարութիւնը—ուրիշ հետեանք չեն ունենում, քանի որ Գօլուխօվսկին, որ միակ պատասխանատուն է կայսրութեան արտաքին քաղաքականութեան համար՝ պարլամենտի նիստերին ներկայ չի գտնուում: Ամենակարեւորը, ինչպէս ասացի, Գ է Լ է Գ ա ս ի օ ն եր ն են (պատգամաւորութիւնները), որոնք գումարւում են երկու կողմերից — Աստրիայից և Ունգարիայից—իւրաքանչիւր տարի, մերթ լիքննայում, մերթ Բուրգապետում և կոմս Գօլուխօվսկու

նախագահութեամբ հանգամանօրէն արծարծում են միջազգային քաղաքականութեան խնդիրները:

* * *

Վիեննայում, դեկտեմբեր ամսին, տեղի ունեցաւ մի կօնգրէս, որ նպատակ ունէր կազմակերպել — մամուլի միջոցով, գլխաւորապէս—սիստէմատիկ մի պրօպագանդ յօգուտ թիւրքահայտակ ժողովուրդների և դործագրել տալ Բերլինի դաշնագրի 61-րդ ու 23-րդ յօդուածները՝ վերաբերեալ Հայաստանին ու Մակեդօնիային:

Կօնգրէսը, որին մասնակից էին պատգամաւորներ հայերի, ալբանների և մակեդօնացիների կողմից, տւեց 2 օր (դեկտ. 11-12): Միաձայն դուրեց հետեւեալ որոշումը.

« Չը նայած վերջին մասնակներս թիւրքաց կառավարութեան գիտականների կողմից արւած դիմումներին և ևէֆօրմներն իրագործելու նորոնք խոստումներին, չը նայած մի յանձնաժողովի և մի յատուկ քննիչի նշանակւելուն—բոլոր նրանք, որոնք լաւ սեղեպի են արեւելքի վիճակին, դիտին, որ այդ դիմումներն ու խոստումները մոռացւելու են, ինչպէս և նախկինները, և, որ այդ պատճառով պիտի ծանր անցքեր տեղի ունենան: Բերլինի դաշնագրի 61-րդ և 23-րդ յօդուածներու նախատեսումն են ևէֆօրմներ և ևրպակաւ, ինչպէս նաև առիտակալ թիւրքիայի համար Ոչ մէկը այդ ևէֆօրմներից չի իրագործւել, մինչդեռ արիւնտու անցքերը, որոնք շատ ժամանակ չէ, ինչ կատարւել են և, որոնք տակաւին չեն մոռացւած—ապսոցուցանում են, որ ներկայ վիճակը շատ վտանգաւոր է Եւրօպայի խաղաղութեան, նոյնպէս և թիւրքիայի դրոյթի համար:

Կօնգրէսը կանգնած է Բերլինի դաշնագրի խարխուխ վրայ և, պիտի ջանք գործ դնէ, որպէս զի իրագործւին այն ևէֆօրմները, որ պետութիւնները իրաւունք ու պարտաւորութիւն ունեն պահանջելու, և որպէս զի Բ. Գուրը անհրաժեշտ երաշխաւորութիւն տայ ևէֆօրմների իրական գործադրութեան համար:

Մինք պիտի ձգտենք դէպի թիւրք պետութեան այլեւայլ ժողովուրդներ և, բաւանութիւնների իրաւունքների հաւասարութիւնը: մենք պիտի բաղձանք, որ յարգւի մարդկայնութիւնն ու արդարութիւնը, քանի որ այդպիսով միայն պիտի հարարար լինի ապահովել Եւրօպայի խաղաղութիւնը և կանոնաւ պահել թիւրքիայի գոյս թիւնը, որին միշտ սպառնում են հողերի նորանսր կորուստներ: Բերլինի դաշնագիրը նախատեսել է ստորագրող պետութիւնների աշխատակողութիւնն ու հակողութիւնը ևէֆօրմների մշակման ու գործադրութեան համար: Բնական է, նեւսու ապէս, որ կօնգրէսը կոչ անէ վկայուելալ պետութիւններին միջամտելու նոյնիսկ թիւրքիայի շահի տեսակէտից »:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՏԻՐԱՆԱԿԵՐՍԻ ԿՈՌԱՍՍԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԾՈՋՐԸ ԳԱՆԱՌԱԿԻՆ ՆԾՐՔԻՆ ՎԻՃԱԿԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

(Պատճէն, թիւրքերէնէ թարգմանած)
(Շարունակութիւն N° 11-ի)

Մուսթաֆա փաշան, որ այս պահու Ջօզանէն կը վերադառնար, հրը լսեց արդարութեան այս կարգաւորութիւնները, սկսաւ թէ խօսքով և թէ գործով հանրային խաղաղութիւնը խռովել և մտածելով որ անոր կողմէն այն պահուն իգործ դրւած բարբարոսական գործերուն մանրամասն նկարագրութիւնը ամէն միւսիմանի խորին վեշտ ու ցաւ պիտի պատճառէ, պիտի բաւականանամ միայն հոս արտագրելով պատճէնը 1333 համար և 2 հոկտ. 313 (1897) թիւ տեղեկագրին, որ ձէլրէյի Խտարէյի ժողովոյ և դատարանի անդամներու կողմէն

պատրաստւած և մատուցւած էր Մարտինի միւթէսարիֆ Խաիֆ էֆէնտիին, որը խաղաղութիւնը վերահաստատելու պաշտօնով ձիզօէ կը գտնւէր:

Պ ա տ ձ է ն Տ Ե Ղ Ե Կ ա գ Ր Ի Ն.—Պիրանի պետ Մուսթաֆա փաշային ձիզօէ գաւառուկին մէջ 5-6 տարիներէ իվր իգործ դրած հալածանք և կեղեքումները որչափ ալ գաւառային, նահանգային և կեդրոնական իշխանութեանց ամէնուն ալ ծանօթ իրողութիւններ ըլլան, բայց և այնպէս նկատելով որ անոր կողմէն գործագրւած և գործադրութիւնը կանխամտածւած բազ-

մաթիւ անվայել արարքներու մասին ձեռնհաս իշխանութեանց միշտ դիմուհիներ ընելը և տեղեկութիւններ հաղորդելը և այդ կերպով խաղաղութեան և ապահովութեան վերահաստատման և ազգայնականութեանց հանդիմանութեան և անդորրութեան նպաստելով ն. ԱՅՀՏ-փառութեան արևշատութեան արթններ բարձրացնել տալը մեր ամենուս ամենաուրախ պարտականութիւնն է. ուստի կը գանք ներկայիս յիշեալ փառային վարմունք և արարքները ամփոփ կերպով տեղեկագրելը Մուսթաֆա փաշան Զօլանէն վերադարձած պահուն, իր հանդիպած 12 գիւղերէն 6-ը այրած և դիւղացիներու բոլոր գոյքերը կողոպտած է: Մնացեալ միւս վեց գիւղերուն գոյք և ստացածքները և ընտանի անասունները կողոպտելէ դատ, դարձեալ յիշեալ 12 գիւղերուն և ուրիշ շատ մը գիւղերու, ուր ոտք կոխած է, ցանքերը ու կանաչեղէնները իր ոչխար և պաճարներուն քրածել տալով՝ այս վայրերու առատութիւնը երաշտութեան և սովի փոխած է: Այդ արարքները հաստատող Բաղէշի նահանգէն հասնող բողոքներու և դիմումներու և իրեն ընկերացող ոստիկաններու կողմէն տրւած տեղեկագիրներու վրայ խնդիրը վերջնականապէս հաստատուած ըլլալուն, ատենք ժամանակին ձեր վսեմութեան հաղորդած էր: Յիշեալ փաշան Միզրէէն դուրս իր յանդգնած ոճրագործութիւններով և ձեռք բերած աւարներով չբաւականանալով երբ Միզրէի հողին վրայ ոտք կը կոխէ, կըսկսի գիւղերը աւերել, խեղճ գիւղացիները վնասել և հարստահարել և կուգայ Ճիզրէի դիմաց Պանի-խանը կոչուած վայրին վրան վրանը կը հաստատէ: Այնտեղ իրեն և իր աշխրէթին վրայ մէկ միլիօս շուրուշէն աւելի յետեալ տուրքին համար կառավարութեան հետ տեղի ունեցած բանակցութեան միջոցին, զանազան պատրակներով կառավարութիւնը խաբելով և ժամանակ շահելու համար 8-10 օր բանակցութիւնը ձգձգելով, այդ միջոցին իր ամբողջ ոչխարները կամրջէն անապատի կողմը կ'անցնէ և այնտեղեր կըսկսի խառնակութեան կրակը արծարծել: Այդ մտք իբր օգնութիւն Սէլիփայի աղաներու, իր տղան Իպրահիմ պէյի հրամանատարութեան տակ ձիաւորներէ կազմած խումբ մը կը ղրկէ հոն, որոնք ճամբան Թայիան աշիրէթէն մի քանի մարդերու հանդիպելով՝ անոնցմէ մին կը մեռցնեն և ստացածքները ու անասունները կը յափշտակեն և Ճիզրէի մէկ ժամ հեռաւորութեամբ Գասր-Ցէլան գիւղին վրայ խումբ մը հետեակներ ղրկելով, դիւղացուց գոյքերը թախել և տուներին քանդել կուտայ: Ինչպէս վերը յիշած ենք, պետական գանձին ունեցած պարտքին վերջ մը տալէ առաջ իր աշիրէթով կամուրջէն անդին անցնելով, հոն 4-5 օրուս հանգըստութեան միջոցին իր պարտքին մի կերպ վճարման վերաբերմամբ տեղի ունեցած բանակցութեան մէջ բոլորովին մերժողական պատասխան տալով հանդերձ, իր արձեկած հրամաններու և դրած արգելքներու չհամակերպող ժողովուրդին և պաշտօնեաներու գլխուն զանազան սպառնալիքներ տեղացուցած և պահ մըն ալ աշիրէթները շրկային և պազարին խուժել տալով՝ ասոր անոր, հանդիպած մարդերուն վրայ յարձակելու սկսած էին: Թէև կառավարութեան ձեռք առած անմիջական միջոցներու շնորհիւ չկրցաւ գասապային մէջ շարիք մը գործել, սակայն կամուրջէն անդին բնակութիւն հաստատելէն առաջին օրէն իսկ 200 աշիրէթ, իրմէ ստացած հրամանին համեմատ, Հաղաբի ճամբան իջնելով Հաղանի և

Քեարսանի բնակիչներէն 2-3 հոգիէն 9 աւանակ և 15 մէճիտիյէ դրամին և ուրիշ գոյքերը կը կողոպտեն և յետոյ Մուսուլէն նիզելիյէ դացող կարաւանն ալ կը թախեն, որոնք յիշեալ գիւղերու բնակիչներու կողմէ տրւած աղբրագրերու և Քէսքիկրանի տասանորդի պաշտօնեայի ղրկած դրութեամբը հաստատուած են: Փաշան 2 օրէ իվեր այ Ճիզրէի դիմացէն կ'ըլլելով 1¹ ժամ հեռաւորութեամբ Ռիհանի գեղը կը քաշէ և Ճիզրէի ժողովուրդին նկատմամբ սնուցած իր չար նպատակներուն գործադրութեան կը ձեռնարկէ. նախ Ռիհանի գիւղին արմտիքները և կանանչեղէնները կը փձացնէ, այսօր ալ ստոյգ աղբիւրներէ կը լսենք թէ կիզէր, ճէպէկ և Պապիտգուպ գիւղերուն արմտիք և անասունները թախել տուած է և անդադար ուրիշ գիւղերու վրայ ալ յարձակումներ կը կատարէ: Այսու հանդերձ դեռ առաջին օրէն Տուտիւրան աշիրէթէն 70-ի լատ վինեալ խուժանը, իրմէ ստացած հրահանգին համեմատ, Աճրին գիւղը գիշերով կը կոխեն, 800 ոչխարները կը կողոպտեն, գիւղացիներէն մարդ մըն ալ կը սպաննեն և մի հատ ալ կը վերաւորեն, որու վրայ ղրկուած քննիչ պաշտօնեան ոճրին վայրը հասնելուն նա ալ կը սպաննէ և 2 մեռեալներու դիակները Ճիզրէ փոխադրելով ցոյց տրեցան նաև ձեր վսեմութեան, որու վրայ սպաննուածներուն ազգականներուն լացն ու կոծը ձեր վսեմութեան ալ գուժն ու արգահատանքը շարժեր էր: Աստի նկատելով որ յիշեալ փաշան յայտնի համարձակ կը յանդգնի խաղաղութիւնը վճռովելու, նկատելով, որ Ճիզրէի մէջ շէն տեղ մը ձգելու դիտաւորութիւնը հրապարակու կը յայտնէ, նկատելով որ օրէնքի և արդարութեան հակառակ ընթացքները հետզհետէ մեծ չափեր ստանալով ապստամբութեան և բռնակալութեան կը հասնի և նկատելով, որ բռնակալութեան հետեանքը կրնայ ծանրակշիւ հոգեւր առաջ բերել, հետեալաբար անհրաժեշտ պէտք մըն է որ այդ հետեանքը կանխելու համար խաղաղութիւնը վերահաստատելու միջոցներ ձեռք առնելն, որովհետև այդ անձնաւորութիւնը պետութեան և ազգին վնասակար և և դաւաճան մըն է և անիկայ աշիրէթներու պետի պաշտօնի մէջ ձգելը արդէն երկար և ուժեղ բազուկի մը իշխանութիւն մ'ուս յանձնել է, որ բնաւ նպատակաւոր մարդ չէ: Աստի կը խնդրենք ձեր վսեմութեանէն, որ բարեհաճի այս անձը իր ամբողջ ընտանիքով մեր կողմերէն ուրիշ վայր մը փոխադրելու միջոցներուն ձեռնարկել և վերահաստատել խախտուած ապահովութիւնը և այդ կերպով ն. ԱՅՀՏ-փառութեան հըու հպատակները այդ անձին ճիրաններէն ազատելով արդարութեան և ապահովութեան ճամբու մը մէջ վերադարձնել դատենք. հրամանը ձերն է՝:

Ն. Ա. միւթէսարիֆը այդ վշտաւիթ տեղեկագիրը ամբողջութեամբ կարդալէ և բնական տանը առջևը դրած երկու դիակներու վրայ աչք մը դարձնելէ յետոյ վայրկենապէս կ'ըմբռնէ ժողովուրդին մէջ լատակայ լեռները: ամբանալու ընդհանուր դիտաւորութիւնը, որուն տարած էր դէք ալ անտանելի դարձած թալանները, կողոպտուները և սպաննութիւնները և որը կրնար մեծ խառնակութեանց տեղի տալ միւս կողմէն ինքը զոտամեայ և մտաւորական կարողութիւնը կորսնցուցած և բարեկարգութիւն և վարչական բարեք մատակարարութեանէ զուրկ բայց և այնպէս շահամու մի անձնաւորութիւն, սկսաւ տնուր դէմքով մը ձեռքերովը ծուկներուն թափ

առ և ըսել թէ «միթէ՞ կարելի է հերքել այս օրինա-
գանցութիւնները և ոճիրները զորոնք աչքովս տեսած
եմ: կարելո՞ւ է միթէ որ ամէն խիղճ խոյլ տայ որ այս
դիակներուն շուրջը ողբացող դժբախտ կիները օրէնքի
արդարութեան և նորին վ. Ե. հաստատութեան շնորհքներէն
զրկւին» և այլ կեղծ ու պատիր շողորթութիւններով
ժողովուրդին յուզումները փարատել և կը յաջողի իսկ
յուզեալ մտքերը հանդարտեցնել այն ստախոսութեամբ,
թէ ճիզրէն մօտերս միւթէսարիֆութեան պիտի փոխուի:
Բայց յետոյ Մուսթաֆա փաշային հետ գաղտնի տես-
նելով կը բանակցին Տիգրանակերտի բանտին մէջ գտնուող
Թահիր, Փաթթաճ և Ապտուլլահ աղաներու ազատ
արձակելու և տեղերնին դարձնելու միջոցներու վրայ:
Այս գաղտնի բանակցութեան յաջորդեց գայմագամ
ԱՅմէտ պէյի պաշտօնակցութիւնը, որը բաւական եղաւ
համոզել ժողովուրդը թէ միւթէսարիֆը պիտի կրնայ
իզուել հանել իր կողմնակցական դիտաւորութիւնը, ուստի
խլամ, քրիստոնեայ և հրէայ ժողովուրդը համաձայնելով
Տիգրանակերտի կուսակալութեան և բարձրագոյն իշխա-
նութեանց 23 հոկտ. 1897 թ. Լակիւր հետեւեալ հեռա-
դիրը զարկին, որուն մի օրինակը պահուած է հեռա-
դրատան մէջ:

Հ Ն Ռ Ա Գ Ն Ր

Մերաններու պետ Մուսթաֆա փաշային կողմէն սուլ-
թանի հաւատարիմ հպատակներու գլխուն իգործ դրւած
զրկանք և հարստահարութիւնները տեղական կառավա-
րութեան և բարձր իշխանութիւններու որչափ որ հա-
ղորդած և արդարութեան գործադրութիւնը պաղատած
ենք, բայց մեր պաղատանքները ցարդ ուեէ արդիւնք մը
չունին: Փաշային իսլամ և քրիստոնեայ գիւղերը թալնելը
և ոչխարները կողոպտելը, իսլամներէն 10 և քրիստո-
նեաներէն 12 հոգիներ սպաննած ըլլալը և գազաին
խաղաղութեան բողոքովն խանգարուած լինելը կուսա-
կալութեան և միւթէսարիֆութեան մօտ հաստատուած են:
Ճիզրէն այցելող Մարտինի միւթէսարիֆ Իսիֆ էֆէնտիի
կարգադրութիւններուն վրայ յոյս դրած ժողովուրդը
ցարդ համբերած է, բայց երբ կը տեսնենք որ ն. վսե-
մութիւնը մեր վստահութիւնը գրաւած գայմագամ ԱՅմէտ
պէյը պաշտօնէն կը ձգէ, Մուսթաֆա փաշան յարգանք
կը պատէ, Ապտի Զատէ Փաթթաճ և Թահիր ու Շէյխ
Ալիի որդի Ապտուլլահ աղաները, որոնք այնքան ժա-
մանակներ մեզ հարստահարած և զանազան վշտերով
խոշտանգած են, Տիգրանակերտէն պիտի վերադարձնէ,
վերջապէս երբ կը տեսնենք որ ճիզրէյի ասկից առաջալ
ծանօթ խնդրին վրայ դատապարտուած և Մարտինէն
խստիւ պահանջուած նորա 50-60-ի մօտ փախստական
աւազակ արբանեակները ճիզրէ մտնելով ժողովուրդին
վրայ կըսպանան, հետեւաբար մեր վլձակը առաջընէն
աւելի վատթարացած և մեղի համար ալ մեր հայրենիքի
մէջ մնալու ապահովութիւնը դրականօրէն կորսուած է:
Եթէ մի գազայի ամբողջ ազգաբնակչութեան լաց ու կոծին
անխելի մնալու պատճառը՝ համիդիէ զօրքերուն կար-
գապահութեան նկատումներն են, աչիրէթն ալ նոյնպէս
այդ հարստահարութիւններէ և հալածումներէ ձանձ-
րացած է, և այսօր բացարձակապէս յայտնի իրողու-
թիւն մըն է որ հրամանատարութիւնը ուրիշի մը ձեռքը
յանձնելի, ցանկացեալ կարգապահութիւնը աւելի սպառով
ձամբու մը մէջ պիտի մտնէ: Եթէ մեր բողոքները թըշ-
նամութեան կը վերագրուին կոր, ամէն ձեռնհաս իշխա-

նութիւններէն մէյ մէկ անձնաւորութիւններ ուղարկելով
մեր վիճակը լուրջ քննութեան մը ենթարկուի: Իսկ եթէ
մեր ապահովութիւնը և անդորրութիւնը մեզ երբէք
չպիտի վերադարձնի, ինչպէս մեր 21 հոկտ. թ. Լակիւր
հեռագրով ալ յայտնեալ ենք, ստիպուած ենք մեր հայ-
րենիքը ձգել և հեռանալ: Աւստի մեր վերջին շունչով
և ամբողջ զօրութեամբ կը պաղատենք որ մեզ պաշտ-
պանէիք մինչև այն օրը, ուր մեր հայրենիքի ամէն մի
քարին և հողին մեր վերջին մնաց-բարեաւը (հրատեջարը)
տալով և մեր զաւակներու և ընտանիքի կարօտաբաւ
վիշտ ու ողբերը տեսնելով՝ արցունքը մեր աչքերուն
լեռները և դաշտերը ողբացնելով պիտի բռնենք գաղ-
թականութեան ձամբան»:

(Կը շարունակուի)

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

1902

Մրցումը նշանաբան է, ազգայնական ու քաղաքական
հակամարտութիւնը — համաշխարհային, տիրապետող
փաստ: Տարիները չեն մեղմում նրան — ամբողջ դարեր
են պէտք: Միջազգային իրաւարար ատեանները, խաղա-
ղասիրական, մարդասիրական և բոլոր նման հոսանքները
դեռ ևս անզօր են զսպելու գազանին, որ մրափում է
մարդկային բնութեան խորունկ ծալքերում:

Եւ, սակայն, մենք յուսուտես չենք: Մենք գիտենք, որ
իր աւուր թի աստիճանական յաղթանակը բիրտ
ու ժի վրայ՝ պատմութեան ծուծն է, նրա պահանջը:
«Յառաջադիմութիւնը» անժխտելի իրողութիւն է, միայն
թէ այսօր նա պայմանաւորում է տիրող տնտեսական
յարաբերութիւններով, ուր անհատի կամքը գրեթէ ոչինչ
է, ուր դասակարգային շահն է գերիշնողը: Կապիտալիզմը
նախագահում է համաշխարհային էլօրիցիային: Նրա
քմահաճոյքը տիրական օրէնք է, մի տեղ նա ճնշում
է ժողովուրդների ազատութիւնը, մի այլ տեղ եռանդով
պաշտպան է կանգնում այդ ազատութեան, բայց ամէն
տեղ էլ նա ղեկավարում է իր սեփական շահի դա-
ւանանքով:

Մենք գիտեցինք անցեալ տարւայ ընթացքում, թէ
ինչպէս կապիտալիստական քաղաքակրթութեան կլասիկ
ներկայացուցիչը՝ Մեծ, Բրիտանիան՝ հակառակ իր ազա-
տամիտ տրադիցիաներին, հակառակ տիեզերական ցաս-
ման ազդակներին՝ իւրեց մի ժողովուրդից նրա ներկական
անկախութիւնը և ենթարկեց նրան իր տիրապետութեան:

Մենք տեսանք նոյն անցեալ տարում, թէ ինչպէս
կապիտալիստական ամենատեղի բռնապետութիւնը՝
Ռուսաստանը՝ միջամտեց յօգուտ մի թշուառ, հարստա-
հարած ժողովուրդի, — Մակեդոնիայի, որ հեծում է
թիւրքաց իշխանութեան տակ:

Ձուգադրութիւնը հրահանգիչ է, երկու պետու-
թիւններն էլ կատարելով իրենց էութեանը միանգամայն
հակառակ գործողութիւններ՝ հնազանդում էին երկուսն
էլ Շահի գերագոյն սկզբունքին:

Նոյն նկատմամբ էր, որ միւս պետութիւնները ևս
յարեցին Ռուսաստանի առաջարկութեան: Անգամ Գեր-
մանիան, որ վերջին տարիներս ոչ մի ջանք չի խնայում
Աբդուլ Համիդին սիրաշահելու, ստիպուած եղաւ իր դես-
պանի միջոցով լուրջ ազգարարութիւն անել Երևանի

բռնակորին: Բայկանները փոթորկել էին, իսկ կապիտալիստական պետութիւնները սոսկում են պատերազմից: Նորանցից իւրաքանչիւրը ձգտում է—Տեղաւոր ու մերձաւոր արեւելքում— խաղաղ ճանապարհով նւաճումներ անել, բայց և ամէն կերպ խոյս է տալից ընդհարումներից: որոնք սովորաբար աղետարհր են լինում թէ յաղթողի և թէ յաղթուողի համար: Այն պետութիւնները, որոնք այսօր մտնում են պաշտպաններն են տաճկական *status quo*-ի վաղը, երբ դեպքերը կը հարկադրեն նրանց, պատրաստ կը լինեն— յանուն խաղաղութեան, յանուն իրենց շահերի և ամենակծու լեզու բանեցնել իրենց «հովանաւորեալի» մօտ: Այդ են թելագրում մեզ բազմանեան անցքերը, Գերմանիայի, Աւստրիայի և Ռուսաստանի դիրքը:

Մակեդոնական խնդիրը տարւայ վերջին կիսում քաղաքական աշխարհի հրատապ խնդիրն էր: Երբեք երկիրը այնքան լայն ու խորը չէր ալեկոծւել: Լցւել էր համբերութեան բաժակը և մակեդոնացին, որ մինչ այն ստրկի համբերութեամբ կրել էր իր լուծը, սիրով սկսեց ձայնակցել ռազմի աղաղակներին: Ապստամբութիւնը պայթեց, դիպլոմատները իրարու անցան: Ռուսաստանը ամենից աւելի «յուզեց»: Յարի կառավարութեան պաշտօնաթերթը հրատարակեց մի շրջաբերական, որի լեզուն, սօնը յիշեցնում էին Ալեքսանդր I-ի թագաւորութեան վերջին շրջանը: Դող ընկաւ Մարգասպանի սիրտը. նա չէր սպասում: Երկիւղը կրկնապատկեց Երբեք մէջ, երբ մինիստր Լամպորֆի ճանապարհորդութիւնը ծանուցեց: Ռուսիոյ արտաքին քաղաքականութեան ղեկավարը գալիս էր խորհրդակցելու կոմս Գօլուխովսկու հետ, որպէս զի ընդհանուր ջանքերով— համաձայն 1897-ի ծանօթ դաշնագրին — փութան հանգցնել հրգեհը Բալկաններում և փրկել Տաճկաստանի *status quo*-ն:

Այն օրից դեռանագիտութիւնը և բոլոր երկրների մամուլը եռանդով արծարծում են ռեֆորմների խնդիրը Մակեդոնիայում: Եւ մենք տակաւին անորոշութեան մէջ ենք: Ամենահակասական լուրեր են շրջում հրատարակի վրայ. ոմանք տարւելով անհիմն լաւատեսութեամբ խօսում են արդէն ինքնավար Մակեդոնիայի մասին. ուրիշները — աւելի սկեպտիկ — տրամադիր են կարծել, որ լեռը մուկ պիտի ծնէ, որ Ռուսաստանի գրեթէ սպառնական շրջաբերականը, երկու լիազոր մինիստրների տեսակցութիւնը և այնքան աղմուկ — մէկ կէտի պիտի յանգին — այն է՝ սուլթանի կառավարութեան պիտի յանձնարարուի որոշ վարչական ռեֆորմներ մտցնել Մակեդոնիայում: 23-րդ յօդուածի, եւրոպական կոնսորցի և նման բաների մասին խօսք չկայ առայժմ:

Մինչ այս մինչ այն թիւրք կառավարութիւնը՝ անակնունելի պատահարներից երկիւղ կրելով՝ ընտրել է արդէն մի յանձնաժողով — մէկը հարիւրաւոր ֆիկտիվ յանձնաժողովներից — որը Ֆէրիփ փաշայի նախագահութեամբ պիտի մշակէ բարենորոգումներ եւրոպական Տաճկաստանի համար... Յանձնաժողովը բաւական ժամանակից իվեր գործում է անսովոր «եռանդով», բայց տակաւին խարխափումների մէջ է... Եւ խօսք, որ այդ եռանդը չպիտի գործէ դրական ուղղութեամբ և որ մակեդոնացի յեղափոխականները այնքան տխմար չեն, որ հաւատ ընծայեն սին խոստումներին:

Զարհուրելի, բքաբեր ձմեռը քշել է հայդուկներին բարձր լեռներից. կազմ ու պատրաստ մնում է բանակը

սպասողական դրութեան մէջ և եթէ թափուած մարդկային արիւնը դուռ ևս անզօր է դրդելու, ում հարկն է, դէպի վճռական քայլ — նա պատրաստ է, այդ մարտական բանակը, առաջիկայ դարնան, աւելի մեծ թափով նետել կուի դաշտ:

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

* * *

Ստորև համառօտիւ կ'արտատպենք *Le Courrier* շաբաթաթերթի 55-րդ թիւին մէջ տպագրուած պ. Ա. Լ. ը ու և Պ օ Լ Ի է ս յայտնի հրատարակագրի մի յօդուածը՝ «Ինչ պէս պետութիւնները կրնան միջամտել Արեւելքի մէջ, — կոչ խաղաղութեան բոլոր բարեկամներուն»:

Յարկելի հրատարակագիրը կըսիսի ընդհանուր կծու ակնարկ մը ձգել բոլոր ոճրագործ և անպատւարներ դէպքերուն վրայ, որ ամէն օր Թիւրքիա կը կատարին, և որոնց պատճառած զգանքը զինքը խորապէս յուզած են:

«Արեւելքը խաղաղացնելու պարտականութիւնը կ'իյնայ եւրոպական պետութիւններու կամ ժողովուրդներու վրայ, ոչ թէ քրիստոնեայ կամ քաղաքակրթուած ըլլալուն, այլ պարզապէս իրենց ապահովութեան համար: Որովհետեւ եթէ այսպէս մշտ շարունակեն արստահարութիւնները եւ շարքերը, ասխուսակիւ լիօրէն տեղի պիտի տան Մակեդոնիոյ եւ Հայաստանի մէջ ընդհանուր ապստամբութեան, որ կրնայ ծագիլ քիչ ժամանակէն՝ նոյնիսկ կարելի է եկող զարնամ և խիտ վտանգել ընդհանուր պատերազմի մը վախով եւրոպական խաղաղութիւնը...»

Ինչպէս յայտնի է, վերջերս մէկ քանի պետութիւններ՝ Ռուսիա, Աւստրիա և Փրանսա, մօտալուտ վտանգէն յուզած, դիմումներ քրած են Դրան, բարեռքելու համար Մակեդոնիոյ արտաճմիկ վիճակը: Սակայն տոյն երկիրը հանդարտեցնելու, հետեւաբար եւրոպայի խաղաղութիւնը ապահովելու համար, բաւական չեն միայն պարզ դիմումները եւ աւելի ազուր մեղքներու պէտք է դիմել... Ամէնքս ալ, ինչպէս նաեւ Մակեդոնիոյ եւ Հայաստանի ժողովուրդները, շատ լաւ գիտենք, թէ ինչ արժէք ունին սուլթանի խոստումները: Բոլոր շարքերը, զարհուրելի շարքաւանջները, անմտ աղէկներու զողովութիւնը կամ անոնց վրայ կատարուած զազանաբարոյ քննութիւնները, հարիւրաւոր զեղծերու կործանումը եւ այլն եւ այլն, վերջապէս ասոնց նման դէպքերը՝ չափէն աւելի դասեր տւին Թիւրքիոյ ժողովուրդներուն, որոնք հիմա խիտ պարզօրէն զեռնն, թէ ինչ է վերապահուած Երբեքն և ինչոք քարեհաճ քողով մը ծածկուած իրադէներուն տակ: Որով, զանոնք ապահովեցնելու համար՝ ոչ քարենորոգումների լուրերը, ոչ ալ պաշտօնեաները փոխելու խոստումները բաւական չեն: Միայն վճռական միջոցներու իրագործումը կրնայ անոնց յոյս մը տալ: Նոյնիսկ Միտհատ փաշայի անջնջուած անհամարողութիւնը, շատ աւելի պաշտպանութիւն մը ջնդկայացնելը քրիստոնեաներուն համար, թէն Երիտասարդ-Թիւրքերուն է միամիտ հաւատարմութիւնը զայն իբր գերագոյն ծոնարկութեան մը մէջ կը ներկայացնէ եւ արդէն սուլթանն ալ իր մասնաւոր խնամքով զայն անյայտացուցած է:

Ուրեմս միակ եւ ապահով մեղքը կը մնայ Պերլինի դաշնադրութեան իրագործումը: Եթէ իբր յիշուած քարենորոգումները գործադրիլ տալ կ'ուզեն՝ իբր միակ ազուր մեղքը կ'առաջարկենք արեւելեան խնդիրները լուծելու համար՝ եւրոպական համաժողով մը՝ գումարումը չգործընթացում ալ հոս նկատել տալու է սակիւն ունեցանք: Այս առաջարկութիւնը պաշտպանեցու ուր, անգլիական, Աւստրիական եւ իտալական մամուլի մեծամասնութեան կողմէ: Սոսկ գերմանական ցագրները, կարծէք հրամանի մը համաձայն, առհասարակ քիչ նպաստաւոր հանդիսացան:

Ինչ որ ալ ըլլայ, հսկասակ Պերլինի անտարբերութեան դէպի ծնշաւանջները, չի պիտի կրնայինք աւելի երկար ատեն անվիշտ վկաններ մալ Հայաստանի եւ Մակեդոնիոյ ցաւերուն: Եւրոպայի մէջ որքան տարածութիւն ու ունենայ գերմանական կայսրութիւնը, դեռ Եւրոպա չէ: Արդէն Կրէտէի օրինակն ալ մեզ ցոյց կուտայ որ դեռ Եւրոպայ կարող է միւսակ գործել Արեւելքի մէջ, առանց Ինքնամիտի հրամանին եւ աշակցութեան: Եւ եթէ գերմանական դիմաւորներու վաշտումները սուսով դժուարութիւններ տալ կը թւին եւրոպական համաժողովի մը գումարուելուն, միթէ կարելի չէ՞ ուրիշ մեղքով նոյն նպատակին հասնիլ եւ վերջապէս ազատել Արեւելքի շահերը, հետեւաբար

ապահովել նաեւ եւրօպական խաղաղութիւնը՝ պաշտօնական ասպատակութեան մը վտանգէն: Անս այս կէտի վրայ է որ կուզեն ուշադրութեան նշաններով բոլոր քաղաքագետները, խաղաղութեան բարեկամները և նաեւ ամէն անոնք որ միջազգային իրաւունքներով կը զբաղին:

Արեւելքի հարստահարումները, որոնց պատուական համար եւրօպական համաժողովի մը իրազօրումը կը մարտնչէր, Պերլինի դաշնադրութենէն առնական իրաւունք մ'ունին բողոքելու: Ոչ թիւրքիս, ոչ ուրիշ ոեւէ պետութիւն չի կրնար համարակիլ զայն միտել կամ անգոր համարել քանի որ եւրօպա իր պետութիւններու ստորագրութիւններով զայն վաւերացուցած և անոնց տւած է:

Սակայն այդ ժողովուրդները չունենալով ինքնավար պետութիւն՝ հետեւաբար դիւանագիտութեան և միջազգային իրաւունքի ստաջ ալ համարւած են այնպէս, ինչպէս եթէ գոյութիւն չունենային չեն կրնար, այն փաստը իրաւունք ունենալով հանդերձ, իրենց պահանջները լսելի ընել տաւ: Ուրեմն, ինչպէս կը տեսնուի, որեւիցէ միջոց չունին իրենց օրինաւոր իրաւունքները պաշտպանելու համար, և Պերլինի դաշնադրութեան ամենէն աւելի վաւերական և ճշուած պայմաններ ալ իրենց մօտ մտած տեսնող կը մտնէ: Բայց ինչ որ Մակեդոնիոյ և Հայաստանի քրիստոնեաները չեն կրնար ընել, միթէ՞ ուրիշներուն ալ անկարելի է: Եւրօպական պետութիւնները, մասնաւոր անոնք որ յիշեալ դաշնադրութիւնը ստորագրած են, արդեօք իրաւունք չունին պահանջելու թիւրքիսէն որ՝ վերջապէս իր խոտուսները կատարէ: Եւ ստոր համար ալ անհրաժեշտ է որ բոլոր պետութիւնները համաձայն ըլլան միտանող գործերու:

Կարելի է ինձ հարցնեն, թէ ի՞նչպէս զանոնք գործադրել տարու է: Միթէ՞ գէշներու միջոցաւ: Այո պարագային չէ՞ք նկատէք յետագայ վտանգները, նամասաւանդ իթէ ատանձին պիտի ըլլայ կռիւլը: Ոչ, պիտի պատասխանենք, երբէր գէշքի ուժով չէ: Կը կարծենք որ երբ Պերլինի դաշնադրութեան 23 և 61-րդ յօդուածները գործադրել տարու ինչորքը հրապարակ նետել մէկ կամ աւելի պետութիւններու կողմէ, աւելի պարզ և պարզով միջոց մը կայ, իրաւարարութիւնը, զոր ամէն տեղ խաղաղութեան քարեկամները կը յայտարարեն: Անտարակոյս, ուժի միջոցաւ ստիպել թելքը կատարութիւնը կատարել տարու այս ու այն պայմանները, իրեն հետ կրնի փորձել է: Բայց այդ կրնին առիթ չտարու համար, ո՞վ կրնայ արգելել իրաւարարութիւնը: Նամասաւանդ որ ինչորք կը կայանայ դաշնադրութեան մը գործադրութեան մէջ, որուն ամենաբնական միջոցը նա է: Որով, եթէ թրանս կամ Ռուսիա, իտալիա կամ Անգլիան առանձին կամ միացած՝ այս կերպով միջամտել ուզեն, չենք կարծեր որ թիւրքիսն միացած ըլլալով Լաւէնի վճռին, իրեն թոյլ տայ զայն մերժել:

Խաղաղութեան բարեկամներուն և իրաւարարութեան համար կազմակերպւած ընկերութիւններուն կը թողնուք մտածել մօր առաջարկած միջոցի վրայ: Գալով մեզի՝ անոր համազամ կողմնակիցներն ենք: Նա մեզ համար ամենապարզ և արդար միջոցն է, ժողովուրդներու կամ պետութիւններու մէջ ծագած երկպառակութիւնները լուծելու համար, թէ և միջամտելու այս կառնակը: զժբարխտարար չէ յատկապէս ամէն տեսակ ինչորքներ լուծելու, մասնաւորապէս ամենէն աւելի ցաւալինները, թէ և որեւիցէ օգնութիւն չը վերապահէր ազգութիւններ կորսնցուցած՝ հարստահարւած ժողովուրդներու, թէ և նա գնրի է սոք ծայրով զրւած դաշնադրութիւններու, չի կրնարով ուժի միջոցաւ կատարւած անիրաւութիւնները դարմանել, սակայն Արեւելքի կեղծքող ժողովուրդները քախտուորութիւն ունեցած են Պերլինի դաշնադրութեան մէջ պաշտօնական իրաւունքներ ձեռք բերելու և անոնց օգնութեամբ կարող են փրկութիւն մը գտնել: Ուրեմն այն դաշնադրութիւնը ստորագրող պետութիւններու շարքին մէջ միթէ չի գտնուի մէկը, որ համարձակ անոնց օգնել հայթայթելով պէտք եղած միջոցները իրենց իրաւունքները յարգել տարու համար: Եւ այդ միջոցն ալ պարզ է՝ իրաւարարութիւնը, որ փոխանակ պատերազմ յաւաճ բերելու, կը վերջանայ խաղաղութեամբ:

Կարելի է հոս ալ մեզ առարկեն որ նոյնիսկ եթէ մէկ քանի պետութիւններ առաջարկած միջոցներուն ղեմել ուզեն, չէ՞ որ վճռելի վերջ գործադրել տարու է, եւ հոն են բուն զմարտութիւնները:

Անշուշտ աւելի դիրքին է վճռել քան կատարել տալ: Բայց նոյն Պերլինի դաշնադրութեան մէջ որոշուած են նաեւ իբր գործելու կերպեր՝ եւրօպայի միջամտութիւնը և հակորոշիւնը: Արդէն լաւ համազամ ըլլալու ենք որ, հայկական և մակեդոնական ինչորքները լուծել կարելի չէ անայց Եւրօպայի հսկողութեան և վերադրմանութեան համաձայն դաշնադրութեան պահանջներուն: Միացած բոլոր միջոցներն սպարդիւն են: Անս այս կէտն է որ պետութիւնները կ'երևին մոռնալ այն տանը, երբ Ռուսաստանի հետ սուլթանէն բարենորոգումներ կը պա-

հանջեն Մակեդոնիոյ համար: Որքան որ եւս առաջիկայները չի տեսնի համարձակն Պերլինի դաշնադրութիւնը գործադրել տալ թել տարով որ ծրագրի պետը զիջենք թարէ իր պահանջներէն խօսքերով սխալ քայլ մ'ենս առած պիտի ըլլան, երբեք պատճառաւոր դատարարով Արեւելքի իշխանութեան և միջոցաւ առանց եւրօպայի խաղաղութեան վտանգելու:

Լ Ո Ւ Ր Ե Ր



Հայկական պրօպագանդի ժամանակագրութիւնը հարստանում է մի քանի նոր կօնֆերանսներով, որոնք տեղի պիտի ունենան եւրօպական կարևոր կենտրոններում, նախաձեռնութեամբ Եւրօպայի Հայ Ուսանողական Միութեան: Յունւարի 20-ին Բերլինում կը խօսի դօքթ. Պատու Բորբախ: Փետրուարի սկզբներին Պարիզում տեղի կ'ունենայ մի մեծ միաձայն, մասնակցութեամբ ակնաւոր Ֆրանսիացի հայասէրներէ: Նոյն փետրուար ամսին հռչակուած կրիպիտո Գէօրգ Բրանդէօ պիտի խօսի Բերլինում, իսկ Պրո Երմէնիօ-ի խմբագիր՝ Պիէր Կիտոն՝ Ժընէվում, երկուսն էլ Հայաստանի և Հայոց հարցի մասին: Այնուհետև տեղի կ'ունենայ յայտնի հրապարակաբօս Ֆրանսիացի Պրէօսէ Գրէօսէի կօնֆերանսը Լիօնում: Միութեան՝ Լիօզօր Կաթիլէն որոշել է այդ դասաթասութիւնները ձայագրել առաջինը համար:



Աիրլին տարիներէ ժամանաշատուր թիւքք էմբարանաներից մինչ—Տոմաթ Մահմաթ փաշա, սուլթանի փեսան և նախկին մինիստր, փաթած Կ. Պոլսից՝ Համբրի Հեա ունեցած տարածաշնութիւնների պատճառով, մեռա: Բրիտանիայում յունւարի 18-ին: Նախկին մինիստրի փախուստը Կ. Պոլսից՝ Քեծ աղմուկով լսեց եւրօպայում, մանաւանդ Ֆրանսիայի մէջ: Նրա կապերի, եռանդի և տեղեկութիւնների վճայ մեծ յոյսեր կային: Ծարաբարխտար ոչ մի գործնական արդիւնք չեղաւ: Մահմաթ փաշան մինչև վերջ էլ սուլթանի Հեա մեաց անհաշա, և անյողադր. չ'ընդունեց իր կնոջ եղբոր առաջարկները և շարունակեց պատել թիւրքիսից դուրս, զանազան ծրագրներով: Այդ ծրագրիցներից մէկն էր՝ անցնել Երիտասարդ թիւքքերի գլուխքէ կապ հաստատել Հայ յեղափոխութեաններէ հետ: Նոյն այդ նպատակով երկու ասրի առաջ ժընէվում, և այդ եզրկատուից յարաբերութեան մէջ մտաւ Պրոքալէ-ի խմբագրութեան հետ: Այդ ծրագրիցները, ինչպէս և Լոնդոնում սկսած նրա լրագրիչը հաղորդութեամբ չպատկեցին, և Մահմաթ փաշան մեռաւ, համարեա մոռացւած քաղաքական արարք է, բայց հաւատարիմ իր թշնամութեան՝ դէպի Երկրբզ Քեօզգի բռնաւորը:



Բրիտանի միջազգային սօցիալիստական բիւրօն, կազմուած բոլոր երկրների սօցիալիստ պատգամաւորներից այս ամաւոյ սկզբին նիստի գումարելով՝ միաձայն ընդունեց Ժան Ժոէսի առաջարկած հետեւեալ բանաձեւը.

«Սօցիալիստական միջազգային բիւրօն գտնում է անհրաժեշտ, որ միջազգային քաղաքականութեան խնդիրները ուսումնասիրուին աւելի ճշգրիտ և աւելի ինքնավար լոյրը կրկնելի սօցիալիստ կուսակցութիւնների և նոյնիսկ միջազգային բիւրօնի կողմից»

Նա յայտարարում է, որ շատ շահեկան կը լինէր, եթէ առաջիկայ կոնգրէսին Ամստերդամում՝ բոլոր երկրների սօցիալիստ կուսակցութիւնները ներկայացնէին զեկոնցու. միւր միջազգային դրութեան, ժողովրդային նախապաշարու. միտքի եւ կառավարական կօմիտայիաների մասին, որոնք կարող են վնասել խաղաղութեանը, ապա նաեւ այն լաւապէս միջոցների մասին, որոնցով կարելի է լուծել հակաուսկու. թիւնները եւ արդեւել ընդհարու. միտքը ժողովուրդների միջեւ):

* * *

Փրանսիայի մէջ վերջերս կատարւած՝ սենատի և պարլամենտական բիւրօյի ընտրութիւնները որոշ հետաքրքրութիւն են ներկայացնում և մեզ համար: Սենատի ընտրութիւններին թեկնածու էր դրւած, իմիջի ալլոց, արտաքին քաղաքականութեան նախկին մինիստր Լաւոս: Ընտրողները ճշշող մեծամասնութեամբ տապալեցին Արդիւլ Համբի տիրահոգակ փաստաբանին, որը այլևս դժուար թէ վերագրուոյ իբրև մինիստր:

Միւս կողմից՝ պատգամաւորական ժողովի բիւրօյի ընտրութիւններին պարլամենտի փոխ-նախագահ ընտրւեց «Պրո Արմէնիա»-ի խմբագրական մասնաժողովի անգամ և հայոց հարցի պերճախօս պաշտպան՝ Ժան Ժօնէս: Այդ ընտրութիւնը— որ համարւում է սօցիալիստական գաղափարի փայլուն յաղթանակ— մեծ յուզում է առաջ բերել եւրոպական մամուլի մէջ:

* * *

Die Information-ի Կ. Պօլսի թղթակիցը գրում է (17 յունւար):

«Մարաքաղաքի հայ շրջաններում գոհունակութեամբ են արձանագրում այն փաստը՝ որ տարին անցաւ Հայաստանի մէջ առանց մեծ կոտորածների: Այդպէս եղաւ շնորհիւ Փրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի, մանաւանդ առաջինի շատ թէ քիչ կորովի միջամտութեանը: Յայտնի է, որ գրութիւնը Մուշէ կողմերում մի րոպէ վերին աստիճանի անհանգստացնող էր: Չորս քիւրդ ցեղեր՝ կանոնաւոր զօրքերի հետ շլթալով պատել էին Սասուն լեռնավայրը՝ Ֆէդայիների բանակին տիրելու և Սասունի ըմբոսներին մի անգամ ընդմիջառնչեցնելու համար... Եւրոպական երեք հիւպատոսական գործակալների գալուստը բարեբար ազդեցութիւն արաւ մշտական սարսափի տակ հեծող ազգաբնակչութեան վրայ: Սասունից եկած վերջին տեղեկութիւնների համեմատ՝ քրդերը և չէքէզները յետ են վերադարձել և ամենայն հաւանականութեամբ ձեռը այդ կողմերում խաղաղ կ'ընթանայ: Երբ ասուում է «խաղաղ», չպէտք է լաւատես եզրակացութիւններ հանել դրանից: Թշուառութիւնը մեծ է Հայաստանում, մանաւանդ այս դաժան ձմրան ժամանակ: Բացի այդ՝ կատարւում են մասնակի բազմաթիւ սպանութիւններ և բանտերը լի են բռնութեան գոհերով»:

* * *

Մակեդոնական երկու կուսակցութիւնների միացման մասին տարածւած լուրերը չեն ճշդւում դժբախտաբար:

Ահա թէ ինչ են հեռագրում Temps լրագրին Վօֆայից (27 յունւար):

«Մակեդոնական երկու Փրակցիաները միացնելու փորձերը ի վերջոյ վիժեցին՝ անձնական մրցումների պատճառով: Հետաքրքրական է, որ այդ նոր թիկնա-

դարձութիւնը իրենց նախկին գերբի մէջ դրեց՝ Միխայլօսկուն ու Չոնչեվին մի կողմից, Սարաֆօվին՝ միւս կողմից: Այս վերջինը՝ մակեդոնական ներքին կազմակերպութեան հետ ներդաշնակ՝ քարոզում է վերստին ապստամբութիւն, մինչդեռ Միխայլօսկի խորհուրդ է տալիս սպասել սեփօրմների արդիւնքին: Դժբախտաբար (°), ներքին կազմակերպութիւնն է, որ ամենակարող է բուն Մակեդոնիայում»:

* * *

Եւրոպական թերթերին հեռագրում են Կ. Պօլսից, որ յունւարի 6/19-ին Գոլմ՝ Գափուի մայր եկեղեցում, սպանութեան փորձ է եղել Օրմանեան պատրիարքի դէմ: Էրզրումցի մի հայ երիտասարդ մի քանի անգամ աորձանակ է արձակել պատրիարքի վրայ և վիրաւորել է նրան աջ ուսից:

Թ Ե Ր Թ Օ Ն

ՆՈՐՏԱԿԻԱՄ ԿԱՊԱՆԲՆԵՐ

ՄԱՐՏՈՍ ԳՕՐԿՈՒ

(Թարգմ.)

Տաք, գեղածիծաղ արեկայ: Մեղմիկ քամիի մը տակ ծովը կը շարժի, քնացող հսկայի մը շնչելուն նման: Հանդարտ ու ապահով կը սահի մեր մակոյկը ոսկեշող կոհակներու մէջէն... Ընդարձակութիւն... անհունութիւն... Հեռուն՝ հին, կիսաւեր ամբարտակ մը, որուն վրայ մենք կը դիմենք: Ուժգին կը զարնւին ալիքները քարաշէն պատնէշին և խայտալով կը գահավիժին լայն ծերպերուն ու ճեղքերուն մէջէն:

«Ծովը կ'ատէ ամէն պատուար», կը նկատէ ընկերս՝ ծերունի, արեակէզ նաւազ մը:

«Վաղուց է որ ամբարտակը խրամատուած է», կը հարցնեմ ես, ակամայ ցնցած ալիքներու հզօր ուժէն, որոնք կրնային այսպիսի վիթխարի քարակոյտեր քշել ամառը:

«Ամէն պարագայի մէջ վաղուց է», կը պատասխանէ ուղեկիցս մտախոհ, «դիտէք նաւազներու հին աւանդութիւնը ծովուն ժայռերու դէմ մղած կուրի մասին: Եթէ կ'ուզէք, պատմեմ Ձեզի»:

* * *

Ազատ ու անկաշկանդ էին ծովուն ալիքները, ինչպէս թռչունները օդին մէջ... Մայր-քամին կ'օրօրէր գիրենք իր քնքուշ մեղեդիներով և գարթ ու անհոգ կը թաւալէին անոնք դէպի անսահման հեռաւորութիւնը: Սակայն սուկալի բռնապետ Մարդը շատ տեսաւ ալիքներուն իրենց երջանկութիւնը: Աճոց անոնց ազատութիւնը կապտել ալ հպարտ ու անարգել պէտք չէ թաւալէին հզօր անդնդախոր ծովուն վրայ, ալ պայծառ արևուն ու կապուտակ երկնքին հետ պէտք չէ խառնէին... Ան փոթեռանդ ստրուկներ ճամբայ հանեց, որ երկրի ծոցէն պաղ ժայռեր պեղեն ու ծովուն խորքը ընկղմեն...

Ծովը հրճանքէն կ'օստոսուէ... Ուրախ կը դիտեն ալիքները ինչպէս ժայռերը ծովուն անդունդը կը խորատուզին... կ'օստոստեն, զերար կը հրմշակեն, կը խնդան, մրմառացող ժայռերը կը համարւին, հաս ու հոն կը թաւալին, ինչ փառաւոր կեանք...

«Յուրս երկրին ծոցէն մտայլ Տիւրքեր եկած են մէջի», կը ցնծան անոնք, «արմկոտ երգերով ընդունինք զիրենք, խանդակաթ գրկէ ընդխառնումներով ու փաղաքշանքներով տաքքընենք զերենք... Միասին զգօսնիկք ծովուն մէջ, միասին գովաբանենք լոյսն ու ազատութիւնը»...

Զարթն են երիտասարդ ալիքները: Միայն Մայր-քամին և Հայր-վիշապհոյժը չար սուլոցներով կ'ընդունին Տիւրքերը: Խոժոռագէմ կը նային ժայռերուն Բայց ժայռերը ծովուն մէջ կը սուզին, քովքով սեղմ կը տեղաուորին և ահա հաստատուն պարիսպ մը վեր կը բուսնի, որ ալիքները սեղմել անոնց ազատ ճամբան փակել կըսկսի...

Ալիքները անհանգիստ կ'ըլլան... Սարսափած կը դիտեն բարձր, մթին պատերը, առաջին անգամն ըլլալով իրենց ճամբան կը փակուի... Ու երկչոտօրէն իրենց ուղիին հետևելով, կուրծքովն ժայռերուն կը զարնւին... Հեծելով ետ կ'ընկրկին... ժայռերը պաղ են, անմատչելի...

Ու ծովը յորձանքներ կը հանէ... Ալիքները ահաբեկ խոյս կուտան, մտայլ ժայռերուն դէմ կուրծքերնին կը փետեկեն... Հեծեծանք մը կը փրթի ծովուն վրայ... Կարթ ալիքները կը տիրամածին:

«Դաւաճանութիւն, դաւաճանութիւն», կը գոչեն, «իր բարեկամներ ընդունեցինք զիրենք... Ազատութիւնը, Ազատութիւնը մեզէ կապտեցին»...

Կուլայ Մայր-քամին... մոնչելով մթին պատերուն դէմ կը նետուի Հայր-վիշապհոյժը...

«Ով ժայռեր, ով մոլեգին ժայռեր, երբեմն դուք ալ ազատ էիք, երբեմն դուք ալ ազատ կուրծքէ կը շնչէիք: Ինչո՞ւ, ինչո՞ւ մեր տղայոց ազատութիւնը կապտեցիք»:

Պաղ ժայռերը դէմքերնին կը խոժոռեն:

«Մենք բարձրագոյն իշխանութեան մը կը հնազանդինք, կը կապտենք երբ ան մեզի կապտել հրամայէ»: Կը պատասխանեն անոնք խուլ հեծեծանքով մը և մտայլօրէն ծովուն վրայ կը հակին:

Հապճեպ կը հեռանայ Մայր-քամին, հապճեպ կը հեռանայ Հայր-վիշապհոյժը, սուլոցներով, ունոցներով հեծկլտոքներով: Ալիքները կը կանչեն, չարաչուք լուրը գուժելու անոնց:

«Ով ալիքներ, ով խեղճ ալիքներ, կորուսած, կորուսած է Ազատութիւնը, ստրուկներ եք այսուհետև»:

Ու փութով կը մեկնին հոնկէ:

Հին ուժեղ ալիքները ծովուն խորը կը գլորին: Մայր-քամին չի սթափեցնել զիրենք, Հայր-վիշապհոյժը չի արթնցնել զիրենք... Սակայն երիտասարդ ալիքները կը թաւալին մտայլ... Ալ ոչ ծիծաղ կը լսուի, ոչ երգ նախկին ազատութեան վրայ, և արևը այնչափ աղօտ երկնքի վրայ ու երկնքը այնչափ մուսլ այնչափ գորշ... Երիտասարդ ալիքները դժնդակ ստրկութենէն ու ժաթափ շատ քիչ անգամ կը համարձակին թշնամիին դէմ ընդհանուր պատերազմի: Ըղթայապիրկ կը նետուին սրածայր ժայռերուն վրայ, սրածայր ժայռերը չեն դողար և յանդուգն պատերազմիկներու ջանջախաճ կուրծքերը կ'արիւնին...

Ծովը կուլայ...

Անցան տարիներ... շատ տարիներ անցան... Ըստ ալիքներ իրենց կուրծքերը պաղ ժայռերուն վրայ ջախջախեցին... Երթալով աւելի և աւելի մտայլութիւն շօջապատեց... Ալիքները խոռվեցան:

«Պիտի սպասենք, ուժ պիտի հաւաքենք»:

Տարիներ անցան: Երիտասարդ ալիքները զօրացան:

ձեպընթաց սուրհանգակներ զտէջէն ծովուն ամեն կողմերը, քնացողները արթնցնելու, բոլոր ալիքները ժայռերուն դէմ պատերազմի նախշու...

ձեպընթաց սուրհանգակները ծովուն անդունդները իշան ծեր ալիքներուն քով, ծեր ալիքները պատերազմի կանչելու: Բայց ծեր ալիքները մտայլօրէն իրենց ապիտակահեր գլուխները թօթեցին...

Ուժ չունինք, զօրութիւն չունինք, ի՞նչպէս էք ազատեցնել ի՞նչպէս կրնանք ժայռերուն հետ չափախել: Միրկալաբ մեկնեցան սուրհանգակները ծնողները գանկու: Մայր-քամին և Հայր-վիշապհոյժը կանչելու: Ծովուն վրայ կը փնտռեն — չէան, լծաճ էր ծնունդն մէջ կը գաննեն ծնողները:

«Խոնարհաբար կ'ողջունենք ձեզ, ով ծնողներ, ալիքներուն կողմէն իբր ձեպընթաց սուրհանգակներ կուրծքէ ձեզի, թողուցէք նեղ լեռները չուսով դէպի ծովը թռչէք, փշոցեցէք ամօթալի շղթաները, որոնք մեր հաշտութեան գերութեան մէջ կը պահեն... Բարձրագոյնք ծեր ալիքներուն մէջ կեանքի ոգին, ազատութեան պայտալք: Ահաբեկ բանակ մը ժողովեցէք և ամենքը փառքն ժայռերուն դէմ մղեցէք: Կոխը չի սարսափեցնէր մեզ, մահը չի սարսափեցնէր մեզ, միայն մեր հղբարձներուն ազատութիւնը կ'ուզենք փրկել»:

Մայր-քամին սիրտը սարսուռով մը բաբախել էր դէպի Հայր-վիշապհոյժին արիւնը կրակի պէս կը բարբառէ: Սուրհանգակներուն խօսքը հին, բարձր ժամանակները կը յիշեցնէ անոնց:

Միրազեղ նայածքներով կը շրջապատեն սուրհանգակները: Լերան փապարներէն անհուն ծովուն վրայ կը հնչէ հզօր թնդիւնով իրենց որախ աղաղակը:

«Կուրանք, կուրանք, կուրանք, ազատութիւնը փրկել, ազատութիւնը փրկել: Ուրքի ինչք, հզօր ալիքներ, խոր տակեցէք ազատութեան կապտեցնէր, ապալեցէք պատուարները»:

Հզօր կը հնչէ կոչը: Քնացողները կ'արթնցնեն, ծերերը երիտասարդ կը դարձնեն, անոնց յանդգնութիւն ու քաջասրտութիւն կը ներշնչէ:

Ու ալիքները ուրքի ելան, ու ալիքները յառաջ թաւալեցան, մարտակոչին հնազանդ:

Խաւար գիշեր մը իջաւ ծովուն վրայ, սև ամպեր վար կախեցան, երբ հզօր մարտակոչը հնչեց: Արեւելքէն մինչև արևմուտք, հարաւէն մինչև հիւսիս յառաջ փութացին ալիքները և ահաբեկ բանակներ խմբեցին...

Յուսահատ յանդգնութեամբ մը երիտասարդ ալիքները ամենէն առաջ պատերազմի խիզախեցին... Կայծակի ու մրկի պէս սուրացին ծովուն վրայ... Մայր-քամին կը մոնչէր, Հայր-վիշապհոյժը կ'որոտար... Պատերազմը սկսաւ:

«Յառաջ, արի կոչակներ, յաղթութիւն կամ մահ»: Ու ազմազարձ աղաղակով ալիքները կը մերձեցան մտայլ ժայռերուն... մտայլ ժայռերը կը դողան: Մօտ են արդէն ալիքները, երթալով աւելի արագ կուրան անոնք: Կուրծքերնին դուրս ցցած յառաջ կուրան... Կուրծքովն ժայռերուն դէմ կը նետուին: Ուշաթափ ետ կ'իյնան... Արիւնով սրսկւած են ժայռերը, անվեհեր մարտնչողներու արիւնով... Կը հեծէ Մայր-քամին:

«Տղայք, իմ սիրասուն տղաքս, արդէն առաջինները ինկան... Բայց եթէ մինչև իսկ դեռ շատեր ալ ինչալը ըլլան, ճգմեցէք այսօր թշնամի»:

Ծովը կ'եռայ:

Ինկածներուն տեղ թարմ կուտորներ կանցնին... Որչափ սարսափելի են անոնք, որչափ ուժով են: Որոտարով ու մանչելով կը խոյանան սրածայր ժայռերուն վրայ և մահաւան միջոցին իսկ իրենց եղբայրները կուր կը հրաւիրեն... Հաստատ կեցած են ժայռերը: Բայց մուսլ ու անվեհեր յառաջ կը թաւալին ալիքները, ու վերջ չունին, վերջ չունին սոսկալի ալիքները:

Հեծեծանք ու մոնչիւն ծովուն վրայ: Հզօր առիւծներու պէս ոտքի ելան ծեր ալիքները երիտասարդներուն օգնելու: Անոնց սպիտակ բաշերը կը ծածանին... շուրջանակի հրկիրը կը դողայ... զարհուրելի ուժով մը ժայռերուն վրայ կը նետուին...

Վրդէն թուղբ, ալօտ առաւօտ մը կը ծագի... Դեռ միշտ անառիկ կը մնան ժայռերը... Տակաւին կ'ոռնայ ծովուն վրայ Մայր-քամին, տակաւին ալիքները մօլեգնութեամբ յառաջ կը դիմեն, սրածայր ժայռերուն վրայ կուրծքերնին ջահջահելու... Սարսափաշար կը փակցին մարդիկ: Տխրագին կը դիտեն նաւազները, ինչպէս ալիքները անհասար կուրին մէջ կը կործանին: Ասկիծէն սրտերնին կը ճմլուի ու կուլան անոնք՝ մուսլ մարդերը և կ'աղօթեն, որ Աստուած կուրին վերջ դնէ, ալիքներուն յաղթանակ պարգևէ:

Մինչև իսկ բռնապետ Մարգը, որ ժայռերը ծովը նետոց կը սարսափի և իր կարծի սիրտը կը դողայ այսպիսի ցաւերու ու տանջանքներու հանդէպ: Ո՛հ, որ պիտի ուրախութեամբ պիտի ուզէր հիմա ժայռերը մէկգիտ առնել ու ալիքներուն իրենց ազատութիւնը տալ վերստին: Ասկան շատ ուշ... Հիմա ալիքները ալ չեն լար, հիմա ալիքները ալ չեն աղբուր: Անոնցմէ շատ շատերը կորսեցան — վրէժ ինկածներուն համար: Եւ տխուր վճռականութեամբ մը Մայր-քամիէն բորբոքած՝ կը նետուին պսպղուն ժայռապատարին վրայ... Հուրջանակի ամէնքը կը զգան — կամ պաղ ժայռերը ծովուն խորքը կը թափին և կամ ծովը գերեզմանոց մը կը դառնայ... Անվեհեր, մահը արհամարելով յառաջ կը քշեն... Ամէնքը միահամուռ յարձակում կը գործեն թշնամիին վրայ, ժայռերը կը դողան հզօր յարձակումին տակ... Ալիքներ կը մոնչին: Ետ կը նահանջեն, ամէնի կատարութեամբ մը կրկին ատելի թշնամիին վրայ նետուելու համար... Ամէն բան իրար կը խառնուի կուր զարհուրելի խուճապին մէջ... Հեծեծանք ու թնդիւն ծովուն վրայ... Եւ ծովը կարծես իր յատակէն վեր ամբառնալ ու երկնքին հետ միանալ կ'ուզէ...

Ու ժայռերը կը տապալին... Միահարոյն ընդհարումէն ընկճելով շունդալի կը տապալին ծովուն խորքը, մեռած ալիքներուն քով... «Վորսեցէք, անարգ դիակներ, կը մոնչէ ծովը վար նետուած ժայռերուն, հոս հանգստարանն է ազատութեան յանդուգն մարտիկներուն, հոս կը պուկին երիտասարդ ալիքները»:

Ծովուն յատակը կը բացւի և ամենախոր անդունդներուն մէջ կը սուզին ժայռերը անէծքներով... «Մերն է յանցանքը... Ալիքներուն փառք, մեզի յաւիտենական նախատինք, ամօթալի գործին համար»:

Հիմա կը հրճի անսահման ծովը, թշնամիին բիրտ ու ժը խորտակից:

Ազատ կը թաւալին ալիքները ու ինկած նահատակները կը փառաբանեն, որոնք իրենց կիանքով հղալարներուն ազատութիւնը ետ գրաւեցին:

«Մեռածներուն փառք»:
«Ապրողներուն ազատութիւն»:

* * *

Նաւազը լուց: Եւ նստած էի յափշտակած այս հրաշալի պատմածքէն:

Լի երկիւղածութեամբ կը դիտէի ազատ ալիքները, որոնք ուժ ու յանդգնութիւն կը շնչէին:

Վերև կապուտակ երկինքը, ներքև անսահման ծովը, մայիսեան պայծառ արևուն լոյսովը ողողուն... Հեռուն՝ քաղաքին ժխորը, կուշտ, ինքնահաճ գոհացողութեան ծիծաղը, սև ծուխ, կողակներու մտրակին շառաչը, շղթաներու շերտերոցը և հեծեծանք, աղիոգորմ հեծեծանք... Ու յանկարծ թւեցաւ ինձի, իբր թէ հեռուն շատ հեռուն, կապոյտ ծովուն ետեւը Մայր-քամին կ'ոռնար. «Ո՛վ մարդիկ, ո՛վ արգահատելի, թշառ մարդիկ»:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՆ ստացած է՝

Օր. Յուսիկից (Ժընև) 5 Քրանք, ԲԵՆԻԳՆԻՆՅՑ (Պ. Յ.-ից) Ֆէլայինների համար 10 Քր., Անվերից (Մ.-ից) 100 Քր., ԲՐԱՅ-ԼԱՅԻ «Գուրգէն» խմբից 100 Քր. (ստացւած՝ Կիպրոս 6, Պիճակ 7, Ատրմանակ 5, Բարսայր 5, Դարաստրի 7, Կայմակ 4, Բարիւղ 7, Աղբիւր 7, Կրգուգ 7, Դաշոյն 5, Ուն 5, Յաւակ 5, Ուտը 7, Փայտուցիկ 4, Բարակ 6, Կայծ 1, Ապուակ 5, Մըտրակ 5, Մաժկոնեան 5, Սերիկ 2), ԱԼԻՐԱՍԿԻՐՈՒՄՅՑԻՑ X. X. 1000 Քրանք: Գումար 1215 Քրանք:

Ա. Ա. Ա. Ա. Ա. յի 1, քաղաքից՝ պրոֆ. Անտ. 50 կրօն, Նիկոյ. 30, Բող. 25, Բոժոս. 25, Սեֆի. 25, Օ՛. 12, Ստեֆ. 10, Աղու. 20, Սիւ. 10, տիկ. Հակ. 20, ոգոս. Բոժ. 20:

ԲԱՆ. քաղ.-ից՝ Բոժ. կըք. 60 կրօն, ԿՕԼՕՄ. ք.-ից՝ Մարտիր 20 կրօն, Թորոս. կըք. 30, Բոսու. 10, 2. քաղաքից նորակալմ հայկական Ներսիս-ից 200 կրօն: Գումար 567 կրօն:

ՈՍԿԱՆԱԳԱՏԻ ԿՕՊԻԱԷՆ՝

Օգոստոսից-դեկտեմբեր 1902 թ. — «ՀԱՆԱՍՏ» խ. 80 ուրբի, 2 հատ կուպոն 4. 75, Խանասորի առիւն Ա.-ից 10, Խանասորի առիւն 2.-ից 22, Խ.-ից վիճ. մց. 9, «Հանգ» խ. 30, «Աղաղէն» խ. 30, «Կնանք» խ. 16, գրքերից 1, Բէկ-ից 100, Նիկ-ից 10, Բ.-ից 5, Բ.-ից խմբ. փող 15, Եամ. ք. խմբ. 27. 79, «Յորդանան» խ. 12. 20, 2. ք. Սիւ. 30, Օւէֆ 10, «Մաժ» խմբ. 10, Սերոք Աղբիւր 34, Բ.-ից խմբ. փող 25, Ալիշան 22, վիճ. մց. 10, Դ.-ից ապուակ վիճ. 20, Մի խումբ քանուր. 21. 10, «Ապուակ» խմբ. (Յ. Յ. Օ. Ս.) 13. 80, «Տէրոյնեան» խ. 60, «Որոտմ» խ. 11. 35, Նժոյգանի երկրորդ 445. 15, ապուակ վիճ. 12, ապուակ վիճ. 4, «Մաժ» խ. 12, Մաժի ծիւղ 6, «Սէրէմեան» խ. 10. 30: Ընդամենը 1130 ուրբի 4 կուպէ:

ԴԱՐՅՈՒ ԿՕՊԻԱԷՆ՝

Ընկերական հանգանակութիւն 48 ուրբի, Յատկանիչ երկք ամսալճար 3, Ոսկեղիչ մէկ ամսալճար 1, Երևանց 6, Դերմինի 10, Զրկիչներէ 5, արծիճ 5:

Ալ քաղաքի «Արշակունիաց» խմբի 1899 թ.ից Դիցազնի մօտ մացած գումարից ստացւած 50 ուրբի: Նոյն քաղաքից հանգանակած 35 ուրբի հետեւեալ անձերից՝ Որոտում, Արէժ, Դրաղամատ, Առիւծ, Իշխան, Թուրք, Վասոզ, Վարժոնց, Արծաղի, Խոնար, Կայծակ, Կրակ Անտոյ, Փամիւռշտ, Սուրբ, Արէժ: Ընդամենը գումար 223 ուրբի:

ՈՍԿԷ-ԽԱՆ՝

Բ. Բ.-ի միջոցով 429 ուրբի 68 կուպէ, որ ներքիւ են հետեւեալ անձից՝ Արիստակէս 100 ուրբի, մի խումբ կանայք 10, Անյայտ ուն 50, Մ. Մ. 50, Հառիմանու 50, Պղատում 50, Գործարան 25, մի վիճակահարից Բ.-ի մնորով 31. 68, Արծի 60, Ուն իր տասի յիշատակին 3: Գումար 429 ուրբի 68 կուպէ:

Խմբագրութեան գիմել հետեւեալ հասցեով՝
Rédaction du «Droschak», Genève (Suisse)